

1298



83
4-65

1294



2013

55 50 03

10 09

83
4-65

800
37-49-



ԱՐԵՎԱՏՈՒԹԵԱՆ ՈՍԿԵ ՀԵՏՏԻԱՆՔՆԵՐԸ

ՃՇՄԱՐԻՑ ԱՆՑՔ

ԳԵՐԱՆԻԱՑԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՁԻՑ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆՑ

ԵՐԵՒԱՆ

ТИПОГРАФЬЯ

А. С. ГУЛАМИРЯНЦА.

Ի ՏՊԱՐԱՆԻ

Ա. Ա. ԳՈՒՐՍԻԵՎԱՆՑ.

1894

Дозволено цензурою. 11 Ноября 1893 года, г. Тифлисъ.

ԴԱՆԻԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ
ԵՒ ԹԵ Ի՞Զ ԷԻՆ ԽՈՍՈՒՄ ՆՐԱ ՄԱՍԻՆ:

Զ...Պ... մեծ զիւզում մարդկանց և աղջկեների մի մեծ խումբ նստել էր հաստաբուն կակղի ծառերի տակ: Տօն էր այդ օրը և երեկոյեան ժամանակ— երգում էին, կատակներ անում, ծիծաղում էին այն գիւղացիների վերայ, որոնք գինովցած՝ տատանուելով գուրս էին գալիս մօտիկ գինետնից: Նատած խըմբին մօտեցաւ բարձրահասակ, 30 տարեկան մի ուժեղ տղամարդ, որ վերան ունէր մոխրագոյն վերարկու, ուսին հրացան և ճանապարհի պարկ: Այդ տեսակ զարդարանքը, ճակատի վերայի վշրքի խոր նշանը, երկայն ու բնիսերը նրան խիստ կերպարանք էին տուել: Մանուկները փախչում և հեռուից էին այդում նրան: Բայց երկու ծերունիներ, որոնց հետ նախօսակցում էր, իսկոյն ճանաչեցին նրան և ասեցին միւսներին:—

— Այս Դանիելն է, մեր ուսումնարանի նախկին ուսուցչի որդին, որ սրանից տասը տարի առաջ զինուոր գնաց: Տեսէք, ի՞նչպէս նա մեծացել է և կերպարանափոխուել:

Ծերերը ու փօքրերը մօտ եկան և շուտով ամ-

բողջ գիւղն արդէն ժողովուել էր Դանիէլի մօտ:
Դանիէլը բարեկամաբար բարեռում էր բոլոր իւր հին
ծանօթների հետ և խօսակցութիւնից երեռում էր, որ
նա թողել էր զինուորական ծառայութիւնը և կա-
մենում էր բնակուել Զ...Պ...ում: Դիւղացիները յա-
ճախ ընդմիջելով խօսակցութիւնը, զրաւիրում էին
նրան՝ խմելու նրա կինացը և լսելու նրանից պատե-
րազմի և առհասարակ այն երկիներում տեսածների
և լսածների մասին պատմութիւններ: Բայց նա
յոդնածութիւնից չէր ուզում խօսել և գնաց ջրա-
ղացբանի հետ, որի մօտ գտնուում էր իւր հօր մա-
հից յետոյ մնացած հարստութիւնը և որն օրն երկու
անգամ կանչում էր Դանիէլին իրեն մօտ՝ ջրաղացը:

Ընթրիքի ժամանակ Դանիէլը միշտ հարցնումէր
ջրաղացբանին և նրա կնոջն իւր հեռանալուց յետոյ
գիւղում եղած փոփոխութիւնների մասին; Նոքա սի-
րով պատասխանում էին նրան և այսպէս խօսակցու-
թիւնը շարունակում էր մինչև կէս գիշեր: Խօսակ-
ցութիւնների ժամանակ Դանիէլը յաճախ զողտուկ
նայում էր սրատես Մարիամին՝ ջրաղացբանի աղջ-
կան: Մարիամն էլ իւր կողմից շատ էր նայում նը-
րան: Դանիէլը գեղեցիկ էր Մարիամի համար և աւե-
լի գեղեցիկ կը լինէր, եթէ չը լինէին նրա մեծ
բեխերը: Սկզբում Մարիամն ամաչում էր Դանիէլի
հետ խօսելու և չէր իմանում որտեղ նայի, երբ նա
մտիկ էր տալիս իրեն, բայց խօսակցութեան վերջում
նրա բեխերի մասին ինչ որ մի բան ասեց նրան:

Հետեւալ օրը Դանիէլը բեխեր չունէր:

Դանիէլին շատ հաճելի էր միշտ ասլրել բարի
ջրաղացբանի, նրա կնոջ և Մարիամի հետ, որի
աչքերը փայլում էին ջերմ սիրով և քաղցրութեամբ:

Բայց մի շաբաթից յետոյ նա տեղափոխուեց հայ-
րական հին խրձիթը և սկսեց զբաղուել իւր բան-
ջարանոցով ու դաշտով: Նա աշխատում էր առաւոտ-
ուանից մինչև գիշեր և աշխանը նրա խրձիթն ա-
մենից գեղեցիկն էր գիւղի մէջ: Նա սիրում էր, երբ
ջրաղացբանի Մարիամը նայում էր իւր այդուն՝
կանաչ ճիւղերից հիւսած պատերի միջից:

Եռաւով քաղաքից ուղարկեցին նրան սպիտակե-
ղիններով և գրքերով մի արկղիկ, որ կազմում էր նը-
րա բոլոր հարստութիւններ: Դիւղացիները շատ զար-
մացան Դանիէլի աղքատ լինելու վերայ:

— Զէ կարողացել բարւոքել իւր վիճակը, — ա-
սումէին նոքա:

Առհասարակ շատ խօսակցութիւններ և դատո-
ղութիւններ էին լինում նրա մասին:

Ի՞նչ ՏԵՍՈՒԻ ԴԱՆԻԷԼԻ ԳԻՒՂՈՒՄ:

Դանիէլը սիրելի և քաղցրուելի էր ամենի հետ.
Նա ըջում էր խրձիթները և հարցնում էր բոլորին
իրենց երեխանների, գործերի և դաշտային աշխա-
տանքների մասին: Հարցնելու պատճառը — սղքատու-
թեան ամենայն տեղ ծայրահեղութեան հասած լի-
նելն էր: Դիւղի հարիւր ընտանիքներից քսանն իրենց
որդոց մուրացկանութիւն անելու էին ուղարկել փաթ-

սունը՝ հաղիւ կարողանում էին օրական պաշար հայթայթել և պարտքերի մէջ էին գտնուում, իսկ մը նացածներն իրենց քմաց համաձայն էին վարում շենական գործերը և պարտականութիւնները կատարում: Ամենայն տեղ ազքատութիւն, աղտոտութիւն, խրճիթներում դարշահոսութիւն էր տիրում, տանիքները կիսափուլ յատակները փթած, անօթները առանց մաքրելու էին. բանջարանոցներում նոյնպէս ամեն բան անհոգ թողնուած էր—ամեն տեղ անկարգութիւն և աղտոտութիւն: Տղամարդիկ և կանացք, առանց լուացուելու ու սանրուելու, շրջում էին պատուարուած ու կելտու հագուստներով: Հակողութիւնից զուրկ երեխաները խաղում էին խրճիթների առաջ զիգուած ցեխերի մէջ: Անմաքրութիւնից յառաջացել էին տկարութիւններ և հիւանդները դեղ ճարելու փոխարէն դիմում էին կախարդներին, որոնցից աւելի մնաս էին ստանում: քան թէ օգուտ: Դանիէլ քորձում էր խորհուրդներ տալ բայց նըրան խիստ պատաժխոնումէին, որ աղքատութեամբ ոչինչ չի կարելի անել և ինդրումէին նրան ուրիշ գործերի մէջ չը խառնուելու:

Զ...Պ...ում ապրելը վտանգաւոր էր դարձել մարդիկ անընդհատ վիճում, թշնամանումէին և իրար խաբում: աղքատները նախանձումէին հարուստներին, հարուստները Ճնշում և հարստահարումէին աղքատներին. մինչեւ անդամ մարդու և կնոջ մէջ էլ վէճեր և երկպառակութիւններ կային: Այդ բոլորը երեխաները տեսնում էին և սովորում: Բայց չընայե-

լովիրենց թշուառ դրութեան, շաբաթ և կիւրտկէ օրերը շատ դրամներ էին ունենում դինետներում խմելու և թուղթ խաղալու համար, իսկ նոցա կանոյք և երեխաները տանը քաղցած էին մնում:

Ի՞նչ է ՊԱՏՄՈՒՄ ԽԵԼՕՔ ԶՐԱԴԱՅԲԱՆԸ:

Սանր էր Դանիէլին տեսնել այնքան թշուառութիւններն իւր ծննդավայր գիւղում: Նա գնաց Ծըրազացը, որտեղ Մարիսամի քաղցր ժպիտը միշտ փարատումէր նրա տխուր մտառանջութիւնները, ինչպէս որ ու ամպերն արեգակի առաջ անցայտանում էն: Նա սկսեց հարցնել ջրաղացբանին.—

—Այս ի՞նչ է և ինչո՞ւ մարդիկ այսպէս կռապաշտցել են, ինչո՞ւ այսպէս աղքատ և խեղճ են ապրում, այն էլ թշնամաբար: Զը լինի՞ թէ այդ բոլը լըլը պատերազմից է յառաջացել:

Զրաղացբանը պատասխանեց.

—Ի հարկէ, մեր գիւղը պատերազմի պատճառով ոչ վարօւմ էր և ոչ ցանում, իսկ պատերազմից յետոյ, ինչպէս աղէտ, վրահասան աւելի վատ տարիներ անբերրութիւն անբերրութեան յետելից: Բայց միայն պատերազմը չէր մեր աղքատութեան պատճառը—այլ առաւել մեր մարմանաւոր իշխանութիւնը: Տանուտէրները, երեցփոխները, դատաւորները—բոլըն էլ շահաւէր, անազնիւ և յիմար մարդիկ են: Տանուտէրներից երկուսը զինետներ են պահում և նրանց համար շատ օգտաւէտ է, երբ գիւղացիները

խմբերով նստած ոյնաեղ սեղանների մօտ, ծախառով
և իրենց աշխատած բոլոր դրամները։ Նրանք գիտ-
մամբ գիւղացիներին հաւատ են ընծայում ու տօկո-
սով գումարներ են տալիս, բայց յետոյ վաճառել են
տալիս նոցա հողը և ինչքերը, երբ ժամանակին չեն վ-
ճարում պարագը։ Ահա այսպէս աղքատացնում են
ժողովրդին։ Համարեա բոլոր հողերն հարուստների
ձեռքն են անցել, ողբա էլ տօկոսով գումարներ տա-
լով աղքատներին, դրանով ևս աւելի շուտ են ահ-
բաղդացնում այն թշուառների գրութիւնը։

—Ահա հենց այդ է ցաւը, ասեց Գանիելը։ —
Բայց չէ՞ որ գուք հասպակական հողեր էլ ունեիք։

—Ունենալիս ունենք, բայց հենց այդ հողն էլ
զրաւ է զրուած և հարուստներն են միայն օգտը-
ւում, —պատասխանեց ջրաղացբանը, — աղքաներն
այդ հողեց ոչ մի կոպէկի օդնութիւն չեն ստանում։

—Եթէ այդ բոլորը դու զիտես, ինչո՞ւ այդ մա-
սին չես յայտնում ժողովրդին, ինչո՞ւ չես բաց անում
նրա աշքերը։ —Հարցրեց Գանիելը բարկացած։

—Ի՞նչպէս կարելի է ասել, բոլորն էլ հարուստ-
ների պարտապաններն են և ով կարող է համարձակ-
ուել նրանց զէմ հակաճառելու, — պատասխանեց
ջրաղացբանը։ —Իսկ ժողովրդին դէպի բարին սովո-
րեցնելու, նրանց մէջ խիզճ զարթեցնելու համար ոչ
ոք չըկայ, դպրոցն էլ քանի գնում վատթարանում։

Գանիելը շարժեց գլուխը և տխուր, տրում
վերադարձաւ տուն։

ԳԱՆԻԵԼԻ ԶԱՆՅԵՐՆ Ի ԶՈՒԲ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ։

Մէկ կիւրակի օր, պատարագից յետոյ, հասա-
րակական ժողով էր կազմուել այն կակը ծառերի
տակ, խորհրդակցելու այն մասին, թէ որտեղից պէսք
է զրամ՝ ձեռք բերել։ Հարկերը և հասարակական
պարագերը վճարելու համար։ Պատառներն և երեխա-
ներն էլ էին հաւաքուել այնտեղ։ Տանուտերի խօսե-
լուց յետոյ, Գանիելը կանգնեց մի բարձր քարի մե-
րայ, որտեղ բոլորն էլ կարող էին տեսնել նրան և
սկսեց բարձր ձայնով խօսել։ Նա խնդրում էր զիւղա-
ցիներին մտածելու իրենց աղքատ գրութեան և ընդ-
հանուր թշուառութեան ու խեղճութեան մասին.
ինդրում էր գինեսմները վերջացնել և ծովութիւնչանել։

—Իսկ գուք, տանուտերներ, — գարձաւ նա նր-
րանց խիստ և վճռական ձայնով — ի՞նչ էք արել
հասարակական ինչքերը, ի՞նչպէս էք մոտածում օգ-
նել մեր գժբախտութեանը…

— Ա. ո. իր, — զոռացին ամբոխի միջից ձայնիր, —
լսիր, անպիտան, թափառականն... իթէ ոչ մենք
քեզ բանս կը նստեցնենք...»

Վախեցած այդ ձայնի աղաղակով և գունաթափ
ինչպէս մեռեալ՝ կանգնած էր ջրաղացբանի աղջիկը
հողակոյախ մերայ և Գանիելից աշքերը չէր հետաց-
նում։ Նա սաստիկ սիրում էր Գանիելին վերջին օ-
րերի համար։

Գանիելը համարձակ շարունակում էր։

— Դուք կարող էք բանուարկել ինձ, միայն նախ

ինձ ցոյց տուեցէք, թէ ի՞նչ անտեղի և սուտ բան
եմ խօսում: Հարցրեցէք ձեր խղճին, ուր են հասա-
րակական ինչքերը, հարստացին էք դուք, թէ աղ-
քասացել կայ ձեր մեջ ազնւութիւն, հաւատ և սեր
դեպի իւր մերձական:

Աղաղակը և ձայները .քանի գնում բարձրանում
էին, մի քանի գիւղացիներ էլ քարեր վեր առան՝ որ
զցեն Դանիէլի վերայ, բայց նա անվախ և համար-
ձակ ամբոխի ամենախիտ տեղեց անցնելով գնաց տուն:
Այսաեղ, գարձեալ գունաժափ և արասառալից աչ-
քերով վազեց Մարիամը և յուզուած սրոտվ հարցրեց.
—Ո՞ղջ ես դու, Դանիէլ:

Սա հանգարտութեամբ հանգստացրեց Մարիա-
մին և պինդ սեղմեց նրան իւր կրծքին:

ԹՇՆԱՄԻՆՆՐԸ ՀԵՏԱՄՈՒԾ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԴԱՆԻԷԼԻՆ:

Թշնամնքների և վերաւորանքների պատճառով
Դանիէլը գիւղում ազատ չէր կարողանում շրջել. եր-
բեմ գիշերներն երեխաները նրա լուսամուտների
ապակիներն էին կոտրատում; երբեմն նրա այգու
պտղատու ծառերն կորատում կամ բանջարանցից
կազմար, վարունկ գողանում: Տանուտէրները, նրա
բողոքին իբրև պատասխան, համարեա միշտ ծիծա-
ղումնին և ասում.

—Կորի՞ր հեռու, անպիտան. դրան էլ անդամ
արժանի չես...

Խակայն նո առաջուայ նման քաղցրաբար և բա-

րի էր բոլորի հետ, սիրով խորհուրդներ էր տալիս
և օգնում էր խեղճերին, ինչքան կարողանում էր
Բայց գիւղի թշուառ դրութեան վերայ հանդիսա-
խղճով նայել չէր կարողանում: Մի անգամ նա վըճ-
ռեց քահանային գիմել նրանից խորհուրդ հարց-
նելու և օգնութիւն խնդրելու. բայց նա այնտեղ էլ
անյաջողութեան պատահէց:

Ն Ո Ր Ո Ւ Ս Ո Ւ Ց Ի Զ Ի Զ :

Դանիէլը գիւղումն իւր անյաջողութիւնների
մասին ոչինչ չէր պատմում և գժգոհ դէմք չէր ցոյց
տալիս. ամենի հետ էլ բարեկամաբար էր ողջունում:

Անցնելով ջրաղացի մօտով, նա շատ ու բախս-
նումէր, երբ տեսնումէր գեղեցիկ Մարիամին, որ նըս-
տած էր լինում իրձթի առաջ՝ նստարանի վերայ՝
բալենու ստուերի տակ և կարումէր...

Մարիամն այլայլում, գողգողում և քաղցրա-
բար ժապառմէր նրան. բայց իսկոյն աչքերում ար-
տասուքներ էին փայլում:

—Նչո՞ւ ես լաց լինում; Մարիամ.—երկիւղով
հարցնում էր Դանիէլը:

Մարիամն իսկոյն սրբումէր արտասուքները,
ծիծաղումէր աւելի քաղցրաբար և զլուխը շարժե-
լով ասումէր.

—Ոչ այսօր, Դանիէլ միայն մի ժամանակ բո-
լոր կիմննաս:

Մարիամն այս անգամ աւելի գեղեցիկ և սիրե-
լի երեւայ նրան:

Բայց Դանիելն ինչքան էր Մարիամին խնդրեց,
սակայն սա չասեց իւր արտասուելու պատճառը:

— Իսկ գու ինչո՞ւ այդպէս տրտում ես, — հարց-
րեց նրան Մարիամը. — ինչպէս երևում քաղաքից
յետոյ գիւղում ապրելը քեզ համար տիրապի է:

Դանիելը լուռ և տրտում՝ ցած էր զցել աչ-
քերը: Մարիամը մօտեցաւ, բռնեց նրա ձեռքը և
հազիւ լսելի ու գողգոջուն ձայնով ասեց.

— Դանիել, ի՞նչ է պատահել քեզ: Ասա ինձ,
սիրելիս:

— Ես բազգաւոր եմ, Մարիամ, երբ քեզ հետ
եմ ես. — բացականչեց Դանիելը: — Բայց նայիր, գիւ-
ղում ի՞նչպիսի աղքատութիւնն է տիրում, ի՞նչպէս
մարդիկ չարչարում ու տանջումնեն... Ես մահու-
չափ ցաւումեմ նոյց վերայ. և նրանց օգնելու հա-
մար քիչ բան հարկաւոր չէ, որ վրկուին:

Մի տիրիր, Դանիել, — միսիթարումէր նրան
Մարիամը, երկնքում կայ արդարագաս Աստուած,
Նա կը գատի նրանց, որոնք չեն կրտարել իրանց
պարտականութիւնները: Քո յանցանքը չէ, որ մեր
ժողովուրդն աղքատանումէ, ինչո՞ւ ես սրանեղում:

— Ոչ Մարիամ, ես չեմ կարող հանդիսան
բախտաւոր լինել, երբ տեսնում եմ, որ գիւղացիներն
աղքատութիւնից և յուսահատութիւնից ստախօսու-
թիւններ, գողութիւններ, սպանութիւններ... Են
անում: Խելնոյց երեխանները... Ոչ, ոյդ դժոնք է...

— Իսկ իմանումես, Դանիել, ընդհատեց նրան
Մարիամը, — որ երեկ վախճանուեց մեր ուսումնարա-

նի ուսուցիչը...

Այդ լուրը, երեւումէր, ապշեցրեց Դանիելին.
Նա խորը մատծեց մի ինչ որ բանի համար և գնաց
տուն: Հետեւ կիւրակէ օքը, երբ պատարագից յե-
տոյ ամբողջ զիւղը ժողովուել էր նոր ուսուցիչ ընտ-
րելու, և կատ այնտեղ և Դանիելը:

Մարիամը պառաւների և աղջիկների հետ լը-
սումէր հեռուից: Նա սաստիկ վախենումէր, որ չը
լինի թէ Դանիելը նորից սկսի խօսել ու բարկացնել
գիւղացիներին և խնդրեց հօքը, որ չը հեռանայ նը-
րա մօտից, և հայրը միշտ հանդարտեցնումէր Դանի-
ելին, երբ նա սկսումէր բորբոքուել:

Գլխաւոր տանուտէրը, Միքօնը, առաջարկեց
գերձակ Սարգսին ուսուցիչ ընտրել. — Նրա գործերը
վաս են գնում, մօր կողմից ինձ աղքական է, — աւե-
լացրեց նա:

Միւս տանուտէր պանդոկապետ Կոնստանդինն
էլ նոյնպէս ներկայացրեց իրան աղջական մի կալ-
ջութակահարի, որը համաձայնեց 40-ի փոխարէն
35 մանիթ ստանալու:

Գերձակը բարկացաւ, ջութակահարին գող, ա-
ւազակ անուանեց և առաջարկեց 30 մ. ստանալու:

Զութակահարը յայտնեց, որ կը գանգատի
գերձակի մերայ նրա հայհոյութեան համար և որ
այդպիսի վճարով չեր համաձայնիլ ժողովը կամե-
նումէր գերձակին ընտրել, որ մի կերպ կարդալգրել
զիտէր: Բայց այդ շիոթ ժամանակում ամբոխից գուրա-
եկաւ Դանիելը և բացականչեց.

— Գուք հովիւին աւելի վարձ էք տալիս, քան
թէ ձեր երեխաների ուսուցին: Բայց ես գիտեմ, որ
դուք քիչ գումար ունէք, այդ պատճառով ասացէք,
կամենում էք ինձ ուսուցիչ ընտրել, ես ձրի յանձն
կառնեմ... .

Մեծ էր զիւղացիների զարմացքը. նոքա լուռ
նայումէին մէկը միւսին և թէև ոմանք ուրախ էին
հեռացնել նրան, բայց մեծամասնութիւնը հասկա-
ցաւ դործի օգուտը և սկսեցին գոռալ աղաղակել
որ ընտրեն նրան: Դանիէլն ընտրուեց: Մարիամը
իւր զարհուրանքից և ամօթից վաղեց ջրաղաց: Դիւ-
զումն ուսուցչութիւնից ստոր պաշտօն շըկար:

Համեստ ջրաղացքանն էլ էր շարժում գլուխը.
Նա մտածեց, որ Դանիէլը ցնորուել է: Բայց Դանի-
էլը մնաց հաստատ իւր վճռում և շուտով ուսուցիչ
էր նշանակուած:

ԴԱՆԻԷԼ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ:

Դու պէտք է ուրախ լինիս աղքատներին օգնե-
լու համար, Մարիամ.— ասեց նրան Դանիէլը միան-
գամ, տեսնելով որ նա շարօւնակումէ տիրել այն-
քանի համար, որ ինքն ուսուցիչ էր:— Իսկ ուրիշ
կերպ օգնել չէ կարելի. Տերերի ընաւորութիւնը մի-
անգամից չես կարող փոխել միայն քիչ քիչ սիրով
կրթելով մանուկներին, գուցէ յաջողուի ամբողջ գիւ-
ղը դէպի ծշմարտութեան ճանապարհը բերել ձիշտ
է, այստեղ ուսուցին արհամարհումեն, բայց մտա-

բերիր, որ մեր Փրկիչն էլ անարդուեց, որ փրկի մարդ-
կանց և գաստիարակի նրանց դէպի լուը:

— Ա՝ Դանիէլ, այդ այդպէս է, բայց եթէ
դու միայն իմանայիր, թէ ինչ ես անում...

Մինչ այս մինչ այն ձմեռը սկսուել էր և Դա-
նիէլը բաց էր արել իւր ուսումնարանը; Նա երե-
խաներին միշտ քաղցրաբար էր հանդիպում և բա-
րեւում. նա պահանջումէր, որ նոքա բոլորն էլ ուսում-
նարան գան սանրուած, լուացած ձեռքերով մա-
քուր հագնուած, թէպէտ շորերը հին կը լինին և
կարկատած:

Որոնք կատարումէին ուսուցչի պատուէրները,
Դանիէլը լսւ եղանակներին նրանց տանումէր իրան
հետ զբոնելու, իսկ վաս եղանակներին տանը նրանց
պատկերազարդ զրքեր էր ցոյց տալիս կամ ասում
էր հետաքրքիր պատմութիւններ: Զարմանալի չէր,
որ երեխաները սաստիկ սիրումէին նրան:

Այս բոլորը շատ էր զարմացնում զիւղացինե-
րին, առաւել այն, որ Դանիէլն ոչ մէկ աշակերտի չէր
պատժում և ծեծում: Ոմանք մինչև անդամ երկիւղ
ունէին և ասումէին, որ ուսուցչի այդ տեսակ վար-
ժունքը լսու չէ:

Դանիէլն ասումէր՝ այն ուսուցիչը, որ չէ կարո-
գանում մանկական քնքոյշ սրտերը սիրով գրաւել դէ-
պի բարին, նա հմուտ չէ իւր արհեստին, իսկ այն ու-
սուցիչը, որ պատժումծեծումէ երեխաներին, նա էլ
իսկապէս գործ է կատարում, բայց այնպիսի գործ, որ
զըկումէ մանուկներին մարդկային խելքից և հոգուց...

ԴԱՐՁԵԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ:

Սակայն գիւղումն անընդհատ լուրեր էին շըրջում, որ Դանիէլը մոլորեցնումէ երեխաներին, սովորեցնումէ նոցա որ և է մի նոր հաւատ: Արեխանիրի սէրը գէպի գպրոցը և գպրոցի խաղաղութիւնը նրանք Դանիէլի կախարդութեամբն էին բացազրում և հաւատացնում էին, որ նա երեխաներին էլ է սովորեցրել զծելու կախարդական նշաններ:

Ժողովրդի առաջ այդ բացակը թիւնների լու-
րը հասաւ և քաղաքը: Մէկ անգամ դասը սկսուե-
լուց առաջ, անսպասիլ կերպով Դանիէլի մօտ եկան
երկու աստիճանաւորներ՝ զիւղե քահանայի հետ:
Նոքա յայտնեցին, որ եկել են լսելու, թէ նա ի՞նչ է առ-
փակեցնում երիսամներին: Տանիէլը սիրով հրառիրեց
նրանց նստելու, որոնք տեղաւորուեցին լուսամուտի
առաջ: Այդ ժամանակ երիսամները մէկ-մէկ ներս էին
հաւաքում: Երիսամների հին, բայց մաքուր հա-
զու ստները շատ հաճելի տպանորութիւն գործեցին:
Ներս մնանելով սենեակը, նոքա ամենից առաջ բարե-
ւու մէկն ուսուցչեն, յետոյ հանգիստ նստելով իրանց
տեղը, հանդարտ խօսում էին իրար հետ և նայում
էին անձանօթներին:

Յուրաքանչյուրը 25 հոգի էին:

Գասպարան մի կողմում տղաներն էին նաև և, միւս
կողմում՝ աղջեկները:

Երբ ով բոլորը հաւաքուեցին, Գանիելը բարձր ձայնով ասեց.

Յետոյ երեխանները բաժանուեցին չորս խմբերի
և ցրուեցին սե գրատախտակի չորս զանազան կող-
մերը: Գրատախտակի վերայ գրած էր տառեր, փան-
կեր և ամբողջ բառեր, որ երեխաններն արտադրում
էին իրանց տետրակների և քալետախտակների վե-
րայ: Դանիէլը մէկից միւսի մօտն էր անցնում, ուղ-
ղում սխալները և սովորեցնում էր կանոնաւոր բռո-
նելքարեգրիչը և զրչակոթը: Հետեւեալ ժամում
յառաջադէմ աշակերտներն էին գրատախտակի վե-
րայ տառեր գրում և պատուիրումէին իրանց խրժ-
քին ցած ձայնով կարդալ զրուածը: Ոչ մէկը միւսին
չէր խանդարում: Դանիէլը միւնոյն ժամանակում
հակումէր բոլորին և հանդարտ ձայնով ուղղումէր նը-
րանց սխալները:

Մի ժամկց յետոյ տառերի փոխարէն գրատախա-
տակի վերայ թուանշաններ և թուաբանական խըն-
դիմներ երեացին, դոցա հետ էլ փոքրիկ նոր ուսու-
ցիչներ և վարժուհիներ, որոնց Դանիէլն էլ ընտրել
յառաջադէմ աշակերտներից։ Աշակերտներից ոմանքը
թուանշաններ էին զբում՝ ոմանքը կարգում՝ ոմանքը
բազմապատկութեան աղեւսակն առում։

Գանիկելը յառաջադէմաշտկերտներին առանձին դժուար խողիներ էր տալիս:

Միենոյն ժամանակ զարմանալի հանդարտութիւն, կարդ ու կանոն էր երեսում գասարանում և երեխաների ջերմ սէր դէպի ուսումը, որպիսի օրինակ աստիճանաւորներն և քահանան չեն տեսել իրանց կեսմբում:

Առաւօտեան դասերը վերջանալուց յետոյ երեխաները զլուխ տալով ուսուցին և անձանօթներին, սկսեցին համեստաբար դուրս գնալ և դռներից հեռու հաղեւ լուեցաւ նոցա ուրախ ծիծաղը և աղաղաղի քաղցր ձայները:

Երեկոյեան դասին ընթերցավարժները կարդացին բարձր ձայնով միքանի ուրախ և խրատական վէպերի նրեխաները հրաժանքի մէջ էին: Եւ որովհետեւ Դանիէլը բոլորիցն էլ զոհ էր, ողդ պատճառով դասի վերջում ննջը մի շատ հետաքրքիր պատմութիւն պատմեց:

Կիրսէի ՈՒՍՈՒՄԲՈՐԱՆԻ ԵՒ ԶԲԱՂԱՅՈՒՄ
ՊԱՏԱՀԱԾ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ.

Աստիճաննաւորները և քահանան մեծ դոլարներով էին խօսում Դանիէլի մասին, իրեւ հմուտ ուսուցին ամբողջ դաւառի մէջ: Այս ինչպէս հեշտ կարելի է եղածկացնել շատ զարմացրեց դիւզացիներին:

Ամառը դասաւութիւնն ընդհատուեց, որովհետեւ մեծ երեխաները դաշտերում օդնում էին ծընալիներին: Բայց Դանիէլն կանչում էր իրան մատ փոքրերին և օրական երկու ժամ պարապում էր նրանց կեսմբում:

Հետ այնուհետև թոյլ էր տալիս նրանց օդնելու իրան բանջարանոցում՝ հեշտ գործերի մէջ կամ՝ դաշտում: Երբ որ մեծ երեխաներին էլ ցանկացան սովորել այն ժամանակ նա սկսեց նրանց հետ պարապել կիւրակի օրերում:

Դասերից յետոյ Դանիէլն վերցնում էր նրանց իւր հետ զբոնելու դաշտում կամ անտառում, ցցց էր տալիս նրանց թիւնաւոր և օգտակար խոտեր, պատմում էր ընտանի և վայրենի գաղանների կեանքի և բնաւորութիւնների, գետերի, ծովերի, սարերի, հեռու երկնների, այնտեղի բնակիչների, տատղերի, արեգակի և այն բոլորի մասին, ինչ որ միայն գիտէր և կարդացել էր գրերի մէջ:

Հասակաւոր շատ երիտասարդներ էլ լսելով այդ պատմութիւնների մասին, իրանք էլ ցանկացան կիւրակի օրերը Դանիէլի մօտ լինելու: Նա ուրախութեամբ համաձայնեց, —միայն ցաւալի էր Դանիէլն նրանց անուս տեսնելը: Նա տալիս էր նոցա տանը սովորելու դասեր, որ պատրաստում էին նրանք գործերից աղատ ժամերում:

Այսպէս Դանիէլը կազմակերպեց կիւրակի ուսութեամբան: Նրա աշակերտներն երախափառութիւնից օգնում էին նրան դաշտային գործերում, թէպէտեւ նա երբէք չէր լնդրում այդ մասին:

Դանիէլի աշակերտների ընկերները գիւղում ծիծաղում էին նրանց վերայ, ծաղում էին և զանազան մականուններ էին տալիս նրանց: Նրանք տաննատէրներն ամեն կերպ աշխատում էին չարախօսել և զըր-

դռել Դանիէլի գէմ ամբողջ զիւղը, որովհետև երկիւղ ունէին, որ նրանց տեղ կընտրեն: Այդ պահանձուվ Դանիէլը միմիայն ջրաղացումն էր ու զում լինել որտեղ բոլորն էլ նրան ուրախ էին:

Բայց մի անգամ Դանիէլն նկատեց, որ այստեղ ինչ որ մի բան է անհամաձայնութեամբ կատարուել — ծեր ջրաղացբանը կնճռուած էր մոտասանջութիւնների մէջ, նրա կինը միշտ սառնագէմ և մաքամալրուած անգամար փաղումէր խրճթի մէջ և պինդ խփումէր գռները իւր յետեից, իսկ Մարիամի աչքերըն լաց էին եղել:

Հենց որ Դանիէլը Մարիամի հետ մենակ ֆնաց, հարցրեց նրան: — Ի՞նչ է պատահել, Մարիամ, ասա ինձ, իմ աղաւնատկ...»

Սրաի յուզմունքից գողգողալով, հազիւ կարողացաւ արտասանել «սիրելի՝ Դանիէլ» և սկսեց հեկեկալ: Նա սկսեց հանդարտացնել Մարիամին, իսկ սաքիչքիչ պատմում էր նրան: — Յիշումես Դանիէլ, որ առանից մի տարի առաջ մի անգամ գու ինձ արտասունքների մէջ տեսոր: Այդ ժամանակ հօրս մօտեկաւ պանդոկապիտ Ոիրօնը և ինձ նշանադրեց իւր որդու համար, որ ջրաղաց ունի Ա...գիւղում: Հայրս և մայրս համաձայն էին ինձ նրան տալու, որովհետեւ պանդօկապիտը հարուստ և ազդեցութիւն ունեցող մարդ էր, բայց ևս յայտնեցի, որ զեռ շատ փոքրը եմ, չեմ կամենու մ մարդու զնալ և ինսպիցի նըրանց յետաձգել ժամանակը գննէ մի տարի: Այժմ ատրին անցել է, նոքա պատասխանի նն եկել: Ես ու-

սեցի, որ ոչ մի ժամանակ մարդու չեմ գնալու: Միրօնի որդին անառակ, անդորր է, իսկ նորա հայրը բիրտ և չար...

Եւ նա նորից սկսեց լաց լինել:

Այս պատմութիւնը չափազանց անհամագուացը Դանիէլին: Նա մօտեցաւ նրան և գոչեց.

— Ի՞մ թանգաղին Մարիամ... վազուց է, որ ես սիրում եմ քեզ կեանքիցս աւելի...»

Մարիամը հեկեկալով ընկաւ նրա կրծքի վերայ և արտասուելուց ընդհատ խօսքերով ասեց:

— Ես սիրում եմ քեզ, Դանիէլ բայց հայրս հարուստ է, նա չէ ուզում ազքատ փեսայ ունենալ:

Դանիէլը գրեկեց արտասուող աղջկան և համբուրելով նրան, ասեց:

Մի վախենար, իմ աղաւնեակ, ոչ ոք աշխարհում չէ կարող խել քեզ ինձանից:

Այս ասելուց յետոյ նա գնաց նրա ծնողների մօս և մի քանի բոպէից յետոյ Մարիամը լսեց, ինչ պէս նոքա բոլորը բորբոքուած և բարձր վիճումէին: Մարիամը չոքեց և սկսեց ջերմագին աղօթել: Վերկենալով՝ նա լուսամուտից տեսաւ, որ ծնողները Դանիէլի հետ գուրս էին զալիս տանից: Այս նրան աւելի անհամագուացրեց: Նա գիտէր Դանիէլի եռանոցութիւնը և վախենումէր, չը լինի թէ նա մի որ եկցէ բանով անպատճել է հօրը և մօրը և նրանք առնումեն նրան Միրօնի մօտ զատի: Եւ ըստանելութեան մէջ նա զարձեալ սկսեց աղօթել Դանիէլի և իւր համար:

Նրեկոյեան 10-դ ժամն էր, երբ փողոցումքայրի ձայներ լսուեցին և նրան մոտան խրճիթը հայրը և մայրը՝ Դանիէլի հետ:

Զրազրացրանը համեստութեամբ գրկելով իւր աղջկան, քաղցրաբար հարցրեց նրան:

—Սիրում ես դու Դանիէլին, Մարիամ:

Նա շփոթութեան մէջ պատասխանեց:

—Այս:

Ծնողները մի անգամ էլ գրկեցին նրան և երկուսին էլ օրհնեցին:

Այդ բոլորը Մարիամին զարմանալի երազներ էին թւում:

Գ.Ա.Ն.Ի.Բ. Վ.Ա.Տ.Հ.Ա.Մ.Բ.Ա.Բ.

Շուտով կատարուեց նոցա հարսանեաց հանդէսը: Երբ որ նորապատիները ջրազրցից Դանիէլի խրճահիթը զնացին, Մարիամն ընկառ ամուսնու գիրին այս խօսքերով:

—Ի՞նչպէս ես բաղդաւոր եմ, Դանիէլ:

Նա սեղմեց նրան իւր կրծքին և համբարելով ասեց:

Նւ մէնք միշտ բալուաւոր կը լինենք, եթէ ոյսօրուանից կը սկսենք ապրել իրար համար, խալազ, միմեանց համաձայն, չունենալով մեր մէջ զաղանիքներ և օքնելով մէկս միւսին ամեն բարի գործերի մէջ:

Հետեւեալ օրը, առաւտօր վաղ, Դանիէլի բոլոր աշակերտները, մեծերը և փոքրերը, աղքատները

և հարուսաները, հագած իրանց լաւ հանգերձները՝ ինչպէս մի մեծ տօն օրում, եկան շնորհաւորելու նոցա ամուսնութիւնը:

Աշակերտների սիրոյ այդ արտայայտութիւնը շափազնց ուրախացրեց Դանիէլին և Մարիամին: Մարիամը համբուրեց բոլոր երեխաներին և արձակեց տուն, միայն, ինչքան կարող էր, նոցա լաւ հիւրասիրելուց յետոյ:

Բայց նոցա ամուսնութեան պատճառով շատ խօսակցութիւններ և զրազարտութիւններ սկսեցին պըտրատել գիւղում: Բոլորը զարմացան, որ հարուստ ջրազրցանն իւր գեղեցիկ աղջկին աղքատ ուսուցչին տուեց: Կնքամայրերը ձանձրացրին ջրազրցանի կնոջն իրանց հարցերով, ինչպէս և մի անգամ էլ այնպէս բարկացրին նրան, որ նա արտասուեց, նա բարկութիւնից ասեց պանդոկապետի կնոջը.

Դանիէլը, եթէ կամենայ, կարող է ձեր բոլոր գինեանները զնել: Նա, ինչքան որ կարծումեն, աւելի հարուստ է: Մի բան միայն, եթէ ես կարողանայի պատմել ձեզ, այն ժամանակ ձեր բերանները բաց կը մնային զարմանքից:

Այդ տեղ նա յանկարծ լոեց, վախճառով իւր շատախօսութիւններից և պանդոկապետի կինը աւելի բան իմանալ չը կարողացաւ, մինչեւ անգամ խօստացաւ լութիւն պահել լսածի մասին: Նա իսկապէս ոչ ոքի չ'ասեց, բացի ամուսնուց և քրոջից, առնելով նրանցից երդում՝ լութիւն պահելու համար: Բայց մի քանի օրից յետոյ գիւղում լուրեր էին

պատում; որպէս թէ ջրաղացքանի կինը Դանիէլի կրծքին ոսկիներ է տեսել, ասումէին, որ Դանիէլը, իրը թէ յայտնի անսպակա մարդ է և զանազան միշ ջոցներով կարողանու մէ ոսկիներ և այլ հարստութիւններ ձեռք բերել:

Սնապաշտ գիւղացիները սկսեցին Դանիէլից վախճառ մինչև անգամ Միքանը նրա վըէժառութեան երկիւղից դադարեց նրան թշնամնէներ անելոց:

ՄԱՐԻՍԻ 1.ԱՒ ՀԱՄԲՈՒԹԸ.

Մինչ այս այն Մարիամը ծաղկումէր որպէս վարդ և օրէցօր առելի էր գեղեցկանում: Դիւզումը բոլորն էլ գրաւուել էին նրա գեղեցկութիւնով: Նա ուրիշներից առելի շքեղ չէր հագնում, բայց միշտ մաքուր, չը նայելով, որ առաւօտուանից մինչև երեկոյ անգագար աշխատում էր:

Մէկ անգամ Մարիամի բարեկամուհիներից երկու նշանադրուածներ խօսակցելով նրա հետ, նկատեցին:

Խօնապէս է այդ, Մարիամ, որ գու այդպէս գեղեցկանումես, ուրիշները հէնց որ մարդու են գնում, իսկոյն տգեղանումէն...դու, հաւանական է, ինչ որ գեղ, բան ես դործ ածումքեղ վերայ...

— Ո՛չ ո՛չ, — պատասխանեց Մարիամը — ուրիշները հէնց որ ամուսնուումեն, ման են գալիս գրզգըզուած մազերով, կեղտու և հոգ չեն տանում իշանց վերայ... իսկ ես միշտ աշխատումէմ մաքուր

լինել, սիրում եմ, ամեն տեղ էլ կարգ ու կանոն պահել և ամեն ինչ մաքրութեան մէջ՝ թէ խոհանոցում, թէ մասանում, և թէ բայցում: Հանդերձներիս վերայի բծերը լուսնում եմ, այդ պատճեռով նոր են երեւում հագուստներս, երկոր ժամանակ եմ հագնում, որովհետև կարկասումէմ ամենափոքր պատռուածներն էլ, որ չը մէծանան: Աս աւելի քիչ դրամ եմ ծախսում, քան թէ միւսները:

Քարեկամուհիները կարմրաստավեցին և միարեան ասեցին. — Իսկ մենք չենք կորողանում՝ մինչև անգամ կարել և կարկատել — և ախուր հեռացնն Մարիամից:

Մարիամը հաղորդեց մարդուն այդ խօսակցութիւնը և յանկարծ վճռեց.

— Դիտե՞ս, ես կը սովորեցնեմ նրանց կարել:

Նատ գուր եկաւ այդ միարբ Դանիէլն:

— Ասուուած օրհնի քեզ գրա համար, — ասեց նա կնոջը. —

— Ոչ միայն այն երկուսին սովորեցրու, այլ և բոլորին, որոնք կրցանկանան սովորել քեզ մօտ: Եւ ինչ քան ընտանիքներ են քանուածում, որովհետեւ կանայք անտեսութիւնից ոչինչ չեն հասկանում: Նատ ցաւալի է, որ գիւղումը չը կայ մի որ և է խելօք և դարի կին. օրինակ տանուաէրի կամ երեցփոխի կինը կարող էր գիւղացիների աղջիկներին ձրի կարել, կարկատել սովորեցնել և այն ժամանակ գիւղում կը լինէին հարուստ և լաւ շատ ընտանիքներ:

Աւրախանալով Դանիէլի առած հաճութեամբ,

Մարիամը կանչեց իրան մօտ իւր երկու բարեկամու-
հիներին և հրաւիրեց նոցա՝ ամենայն օր երեկոները
յաճախել իրան մօտ: Նա սովորեցնում էր նրանց ըս-
պիտակեղիններ կարել հմառութեամբ կարկատել հան-
դերձների պատուածները, շապիկներ ձևել, գուլ-
պաներ գործել և կարկատել: Եյց էր տալիս նոցա ըն-
տանեկան տնտեսութեան վերաբերեալ ամեն ինչ, ա-
ռաջնորդում էր նոցա՝ մառանը, գոմը, շումարան-
ները—ամեն տեղ էլ ամեն բան այնպէս կարդին,
այնպէս մաքուր և լաւ էր, որ շատ հաճելի էր տես-
նելը. և այդ բոլորի համար շատ չարչարանք էլ չէր
պահանջնում, որովհետեւ ամեն բան միշտ իւր տե-
ղումն էր իսկոյն կատարուում: Առաջնորդում էր նոցա
և բանջարանոցը, սովորեցնում էր նոցա մաքուր և իս-
տակ պահել այն, որ ուտելիքներն առողջ և համել
լինեն:

Բարեկամուհիները շատ էին ուրախանում, որ
Մարիամի շնորհքով պէտք է հաճյանան իրանց ա-
մուսիններին՝ տնտեսութեան համար քիչ զրամծախ-
սելով: Շուտով և ուրիշ աղջեկներ էլ սկսեցին յաճա-
խել նրա մօտ, այնպէս որ, մի ամբողջ ուսումնարան
կազմուեց: Սկզբում Մարիամը գժուարանում էր կա-
ռավարել իւր տնտեսական բոլոր գործերը, բոյց յե-
տոյ իրանք աշակերտուհիները շատ էին օգնում նը-
րան բանջարանոցում և լրացարանում: Մի տարուց
յետոյ ամբողջ գիւղում նոր կարգեր էին նկատուում:
Նա տանտիկիններ բանջարեղիններ և պատուղներ էին
տանում քաղաք վաճառելու և առհասարակ իրանց

գործերը լաւ կարգի տակ էին գրել:

Նատ էին յաճախում Մարիամի մօտ՝ նրա խոր-
հուրդը և օգնութիւնը խնդրելու, իսկ նա ուրա-
խութեամբ միշտ օգնում էր, ինչով միայն կարողանում
էր: Ամենն էլ նրան շատ էին սիրում նրա բարի և
ցածրասիրա լինելու համար, բոյց շատ էին ցաւում,
որ այդպիսի գեղեցիկ և լաւ կինը կախարդ Դանի-
էլի ամուսինն է:

Ն Ո Ր Ա Ն Ց Ք :

Դանիէլի արած բոլոր բարերարութիւնները միշտ
վատ կողմերով էին բացազրում: Այսպէս, նա սովո-
րեցնում էր երեխաններին, որ միայն տգէտ, մնապաշտ
մարդիկն են ողբներին, երազներին և կախարդներին
հաւատում, իսկ գիւղումն ասում էին, որ նա չէ հա-
ւատում ոչ Աստծուն և ոչ էլ սատանային: Նա սո-
վորեցնում էր նրանց ճանաչելու գաշտի և անտառի
թիւնաւոր բոյսերը, որպէս զի զզոյշ լինին նրանցից,
ասում էին, որ նա սովորեցնում է նբանցից թոյն պատ-
րաստել: Գլխաւորապէս ասում էր նրան պանդոկա-
պետ Միքոնը և վերջը վճռում է, որ ինքը, ինչպէս
տանուտէր, պարտաւոր է գատարանում յայտնել թէ
ինչպէս նա սատիկ մնլրեցնում է ամբողջ գիւղը:
Մէկ կիւրակի օր նա այդ նպատակով քաղաք գնաց:
Ճանապարհին նրան մի պատուաւոր ձիաւոր պատա-
հեց, ուկեկար նշանազգեստով և շտապով հարցրեց:
—Այստեղ գիւղում բնակւո՞ւ մէ մի ոմն Դանիէլանու-

նով և նա տանը կրլինի:—Պանդոկապեսը պատասխանեց, որ բնակւումէ: —Թագաժառանդը նրա մօսն է գնում, —յայտնեց անծանօթը և արշաւեց հեռու: Միքրոնը զարմանքից բերանը բացեց... ի՞նչպէս. թագաժառանդը դնումէ Դանիէլի մօս...

Հետո այդ բոպէն վեցաձի շքեղազարդ կառքն արագ ընթանումէր գետի գիւղը: Կառքի մէջ նըստել էր մի երիտասարդ մարդ, որ կրծքի վերայ տառզանշան ունէր: Տեսնելով նրան՝ Միքրոնը սաստիկ բշտապով տուն վերագտրձաւ, որտեղ ճանապարհին հանդիպեց նրան աղախինը, որ այլայլուած գոչեց նրան, —թագաւորը Դանիէլի մօսն է, ամբողջ գիւղը վաղեց նրա տունը՝ տեսնելու թագաւորին:

Միքրոնն էլ գնաց այնաեղ: Աչս ժամկից յիսոյ, Դանիէլի և Մարիամի ուղեկցութեամբ և քաղցր խօսելով նրանց հետ, դուրս եկաւ թագաժառանդը տանից: Նստելով կառքը, նա սեղմեց նոցա երկուսի ձեռքերը և կառքը արագ սլացաւ հեռու: Բոլոր դիւզացիները գլխարաց կանգնած էին զարմանքից՝ բերանները բաց մնացած:

Այդ ժամանակուանից զիւղում բոլորն էլ հաստատ համոզուեցին, որ Դանիէլը իմանում է ծածուկ կերպով ոսկի շինել և որ նշանաւոր մարդիկ գալիս են նրա մօս՝ այդ արհեստը սպազելու:

Մի քանի աղքատ և թշուառ գիւղացիներ էլ այսպէս էին խօսակցում: — Ե՞նչ լու կլիներ, որ իմանայինք այդ արհեստը, այն ժամանակ մենք էլ իսկայն կը սկսէնք ոսկի շինել:

ՈՍԿԻ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐԻ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

Դանիէլը սաստիկ զարմացաւ, երբ մի քանի գիւղացիներ սկսեցին յաճախել նրա մօտ և խնդրումէին, որ իրանց հետ առանձին խօսի:

— Դանիէլ, — ասումէին նրանք, — ամբողջ գիւղն էլ զիւտէ, որ դու ոսկի պատրաստելու արհեստն իմառ նումես և եթէ հնարաւոր է, ինձ էլ սովորեցրու, խնդրում եմ քեզ: Ասումեն, որ դու կախարդ ես, բայց մենք սաստանայից չենք վախենում և եկել եմ: Որովհետեւ շատ կարիք ունեմ:

Շատ վշացրեց Դանիէլին իւր համագիւղացիների այդ յիմարութիւնը և երկար ժամանակ չը գիւտէր ինչ պատասխանել նրանց. վերջապէս առաջարկեց իւրաքանչեւրին այդ օրն երեկոյեան 11 ժամին գալ առանձին իրան մօտ:

Որոշած ժամին նոքա բոլորը մէկը միւսից ծածծուկ շատապեցին նշանակած տեսակցութիւնն ունենալու...

Դանիէլը բոլորին մէկ-մէկ, ինչպէս որ եկան, ներս էր տանում մի մութ սենեակ: Հաւաքռածները 32 հոգի էին: Նոքա սաստիկ վախեցան, երբ մէկը միւսի յետելից մանելով զգում էին սենեակի մէջ կենդանի մարդու ներկայութիւն, զողդողում էին երկիւղեց և ուրախութեամբ դուրս կը փախչէին, եթէ չը վախենային զրա համար տուգանք վճարելու:

Այսպէս նոքա անցկացրին մի ամբողջ ժամ՝ հաղիւ շունչքաշելով խոր լուռթեան և երկիւղի մէջ:

Բայց ահա ժամը խփեց 12-ը և զանգի վերջին հարուածի հետ բացուեցաւ դուռը և սենեակը մտաւ մի սպայ, երկայն թուրը կողքին և խաչը կրծքին; նու ձեռքին բռնած ուներ երկու վառած մոմեր, որ գըրեց սեղանի վերայ: Այսաեղ բոլորը միմեանց ձանաւշեցին և սաստիկ ամաչեցին, որովհետև բոլորն էլ հասկացան թէ ինչ բանի համար են եկած. նոքանայեցին շքեղաշուք սպային և ձանաչեցին, որ նա Դանիելն է: Սա դեմքի վեհմ արտայայտութեամբ սկսեց խօսել.

Թշուառներ, վերջապէս դուք ձանաչեցիք ինձ: Ես կախարդ չեմ: Ես հաւատում եմ միակ Աստծուն: Դուք էք վաղուցուանից հեռացել նրանից. քնել էք և շույլել սոստիօսել, կողոպտել և վաճառել էք մէկըդ միւսին. թուղթ էք խաղացել, մոռանալով ձեր կողջը և երեխաններին. դուք անձնատուր էք եղել գեերին և նրա մոլորեցութեանը: Այդ սպատճառով աղքատութեան և յուսահատութեան մէջ էք ընկել: Միայն ազնւութիւնը և սէրը դէպի մերձական կարող են փրկել ձեզ: Աթէ կատարէք Աստծու պատուիրանները, դուք բաղդաւոր կը լինէք: Ես չեմ ցանկանում հարուստ լինել բայց ես աղքատ էլ չեմ: Եթէ ցանկանում էք լինել ինձ նման, առլիցէք այնպէս, ինչպէս որ ես եմ ապլում:

Ասելով այդ, Դանիելը ցոյց դրեց սեղանի վրայ մի մեծ ոսկու քսակ. ոսկիները զնալով զլորուեցին սեղանի երեխն, իրանց փայլով կուրացնելով աղքատ գիւղացիների աչքերը, — նոքանայեցին կեանքում այն-

քան ոսկի չելին տեսել և նրանց սրտերը սկսեցին սաստիկ բաբախսիլ:

Բայց Դանիելը շարունակեց.

Ոսկին չէ, որ մարդուն տալիս է բաղդ, այլ խելքը և ճշմարտութիւնը, որոնք օգնում են այն ձեռք բերել և զործադրել մարդկանց օգտին: Դուք եկել էք ինձ մօտ, որ սովորէք ոսկի պատրաստելու արհեստը. բայց ես ձեզ կը սովորեցնեմ մի այնպիսի արհեստ, որ կեանքի մէջ հաղար անգամ աւելի թագագին է, քան թէ իսկական ոսկին: Նթէ իմանաք այն, դուք կ'ունենաք ոսկի և նրան այնքան բարձր չէք գնահատիլ, ինչպէս որ հիմա էք գնահատում: Բայց այդ բաղդը կարելի է ձեռք բերել միայն 7 տարի և 7 շաբաթ փորձ անելուց յետոյ: Նա, որ կը համբերի մինչև վերջը՝ արհեստը սովորելու, միշտ բաղդատոր կը լինի: Այս ժամանակամիջոցում ձեզանից ամեն-մէկն աւելի ոսկի կ'ունենայ, քան որ տեսնում էք այստեղ: Բայց այս փորձը զժուար կը լինի յանցաւոր մարդկանց համար. նոքա պէտք է փոխեն իրանց բնաւորութիւնները և նոր մարդիկ են լինելու:

32 գիւղացիները լուռ լսում էին Դանիելին և զարմացմամբ նայում նրան:

Ալ վճռումէ փորձառութեան ննթարկուիլթող մնայ այսանուլ իսկ որոնք փախենում են և կտսկածում՝ թող գնան այսաեղեց:

Ոչ ոք չը գնաց:

— Եթէ այդպէս է, — բացականչեց Դանիելը, — տուէք ինձ ամենուրեք Աստծու առաջ 7 խոստու-

մըն, որ պէտք է խիստ կերպով կատարէք 7 տար-
տայ և 7 շաբաթուայ ընթացքում:

Ա.Ռ.Ջ.ՑԻՆԸ՝ 7 տարի և 7 շաբաթ չը պէտք է
ձեր ոոր գինետան ճանապարհով զնայ, իսկ դրա փո-
խարէն գուք պէտք է եկեղեցի յաճախէք և կատա-
րէք Աստծու խօսքը:

ԵՐԿՐՈՐԴԸ՝ 7 տարի և 7 շաբաթ չը պէտք է
թզթախաղ ձեռք առնէք:

ԵՐՐՈՐԴԸ՝ 7 տ. և 7 շ. չը պէտք է հայհոյէք,
երդուէք և ստախոսէք:

ԶՈՐՅՈՒԹԸ՝ 7 տ. և 7 շ. պէտք է ամենայն օր
ազօթէք և ջանասիրութեամբ ու աղնուութեամբ
աշխատէք և պարտքեր չ'անէք:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ՝ նա, որ այդ ժամանակի ընթաց-
քում կ'արթենայ, նոյն իսկ մէկ անգամ, կ'արձակուի
մեր գաշնակցութիւնից.

ՎԵՅՏԵՐՈՐԴԸ՝ խրճիթներում, բագերում ամեն
տեղ պէտք է մաքուր և խտակ լինի. Այդ ես լի-
մանամ մեր գաշնակիցներից:

Ա ԵՅԹՆԵՐՈՐԴԸ՝ Ձեր մարմինը Աստծու տաճար
պէտք է լինի, հետեւալիս հարկաւոր է ողջախոհ,
ժուժկալ սրբաօէր և մաքուր լինել նոյնպէս պէտք
է մաքուր պահել ձեկ հանդերձները և երեխաները:
Այդ էլ կը լինի մեր գրօշակը:

Ով ձեզանից խօսք կըտայ ոյս խոսառմներն կո-
տարելու, թող տռաջ գայ և ձեռքն ինձ տայ՝ իրեւ
նշան մեր դաշնակցութեան:

Թոյլերին մենք կ'օգնենք:

Երեսուներկու գիւղացիներից իւրաքանչիւր մէ-
կը մօտենում էր նրան և ոսկով ծածկուած սեղանի
վերայից մեկնելով ձեռքը, ասում էր.

—Ես համաձայն եմ:

—Գնացէք խաղաղութեամբ տուն՝ քնիլու և
Աստծուն աղօթեցէք՝ ոյժ տոյ ձեկ՝ ձեր խոստմունք-
ները կատարելու: Ես երբ կը վերջանայ փորձառութեան
ժամանակը, դուք կը տեսնէք, որ ձեզանից իւրա-
քանչիւրն այստեղ կը բերի ձեր այսօրուայ տեսա-
ծից աւելի՝ շատ ոսկի:

Գանիելը պատուիրեց նրանց նաև, որ այդ գի-
շերուայ իրանց տեսածների ու լսածների մասին չը
խօսեն, մինչև անզամ իրար հետ:

Խոր լոււթեան մէջ նոքտ ցրուեցին տները:
Ամեն—մէկը մօտածում էր պատուհած զէպէի մասին:
Նոքտ այդ չէին սպասում: Խոստումների կատարին
անկարելի—դժուար էր թւում: Բայց խորհրդառոր
7 տարին և 7 շաբաթը, ոսկով ծածկուած սեղանը,
Գանիելի ասածները, նրա սպայտական նշանազենուր
և ասպետական նշանը, կես դիչերային խուլ ժամը—
այդ բոլորը թւում էր նրանց, որպէս թէ տեսիլ-
քում են երեւացել:

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԶՈՐՄՅԱՅՔ.

Ի՞նչ է պատահել Բարսեղ: Պօղոս, այս ի՞նչ
բան է—հարցնում էր միւս տռաւօռը գիւղի միջեց
անյնելով մի ձեր կաղ ծառայ:—Միթէ կրկին մէ-

կին սպասում էք, թագաւորին կամ արքայորդուն,
ի՞նչ այդպէս ամեն տեղ հաւաքում, մաքրում էք:
Եթեև պատասխան բոլորն էլ ծիծազում էին:

Եւ իսկապէս՝ շատ խրճիթներում անսովոր կեն-
գանութիւն էր տիրում: Կուսնում էին լուսամուտ-
ները, գռները, սեղանները, մաքրում էին աղըք:—
ամեն տեղ կարգաւորում էին:

Երեսներկու դաշնակիցները, 'ի հարկէ իմանում
էին, թէ բանն ինչումն է, բայց լուսմ էին: Նոքա
մտածում էին այն մասին, որ 7 տարի և 7 շաբա-
թից յետոյ նոցա արկղները պէտք է ոսկով լցուին:

Դանիէլը տեսնելով նոյտ հոգերը, ասեց Սա-
րիամին:

— Զեմ իմանում, ձիշոն ասած, ուրախանամ,
թէ տիրեմ: Նայիր նրանց, ինչեր չարեցին նոքա
Աստծու, կնոջ և երեխաների սիրուց, կարիքից և
սեպհական հասկացողութիւնից— նոքա հրմա գոր-
ծում են մնապաշտական երկրողի և յուտոյ ազգեցու-
թեան տակ: Թշուառներ: Բայց թող գոնէ մնապաշ-
տութիւնը նոցա առաջնորդի գէպի ճանաշումն ճշշ-
մարտութեան և աղահութիւնը— գէպի արդարու-
թեան:

Մինչ այս մինչ այն ընդհանուր զարմացքը
հետզետէ մեծանում էր: Այն զիւղացիների օրինակ-
ներին շատերը հետեւեցին: Եւ ահա ինչ մի անսովոր
բան պատահեց, զինետները սկսեցին դատարկուել
ողի շատ քիչ էին պահանջում, կիւրակի օրերը ոչ
ոք թղթախաղի ձեռք չ'էր տալիս, չ'էին լուսում հայ-

հոյանքներ:

Գինեվաճառները, վշտից ուզում էին լաց լինել
երբ տեսան, որ իրանց խանութները հետզհետէ գա-
դարկուում են:

— Երեւում է, որ մարդիկ ցնորուել են,— ասում
էին բոլորը: Բայց այս ի՞նչ բան է: Ոչ մի ազնիւ-
մարդ չ'է կարող այս բանին համբերել քամբաղդու-
թիւն և որիշ ոչինչ: Եթէ այսպէս շարունակուի,
մենք պէտք է կողանեք մեր գինեաները:

Միրօնն աշխատում էր շողոքորթութեամբ գիւ-
ղացիներին գրաւել դէպ իրան. պատում էր ո-
մանց և օլիով:

— Խնչու չ'էք գալիս օղի խմում: — Հարցնում
էր նա:

— Իրամ չը կայ, — պատասխանում էին նրանք:

— Յիմարներ, ապառիկով ել եմ թողնում, մեր
մարդիկն էք, յետոյ հաշիւ կըտեսնենք: Բայց գիւ-
ղացիները չ'էին գալիս խմելու:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴԱՆՉԱՐԱՆ ԵՒ ՈՒՐԻՇ ՆՈՐԱՄՈՒԾՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.

Այն ժամանակ գինեվաճառ տանուաէրները սաս-
տիկ բարկութիւնից սպառնացին իրանց պարտապան
գիւղացիներին, որ եթէ մի անգամից չ'են վճարիւ
իրանց պարտքը կամ տուաջուայ նման չ'են շարու-
նակիւ յաճախել զինետները, դուրս կ'անեն նրանց ի-
րանց տներից: Գիւղացիները սպասափած՝ շտապեցին

Դանիելի մօտ:

— Օդնիր մեղ, Դանիել, ասում էին նոքա, ինչքան էլ ծանր է մեր խոստումը, բայց մենք աշխատում ենք կատարել այն, միայն հիմա մեղ մնում է կորչել—չ'ենք իմանում ինչ անել:

Դանիելն ակաց հարցնել թէ իւրաքանչիւրն ի՞նչքան, ի՞նչ տօկոսով և ո՞մն է պարտ. և վերցնելով զրիչը, գրում էր նոցա պատասխանները:

— Ի՞նչքան հող և անտառն ունես և ի՞նչքանով կարող ես վաճառել քո ցորենը, շաբաթական ի՞նչքան կը ծախսես ընտանիքիդ համար և գու, կինդ և երեխաներդ օրական ի՞նչքան կարող էք աշխատել.—Հարցնում էր նա իւրաքանչիւրին:

Այստեղ պարզ երևաց նոցա անկարգ և անկանոն կառավարութիւնը, ոմանք մի քանի շարք տարիների տօկոսները չ'են վճարել ուրիշները ծայրահեղ չքաւորութիւնից ստիպուած՝ տանուաէրներից 20 և 25 տօկոսներով գումարներ էին վերցրել: Այն ժամանակ Դանիելը վճռեց գնալքազաք՝ իւր ձեռքով գումարի վերցնել օ կամ օ տօկոսվ վաշխառուներին վճարելու համար, որպէս զե այդպիսով զիւղացների քամբաղդութեան առաջն կարողանայ առնել: Մի քանիսի պարտքն աւելի շատ էր, քան ունեցած գոյքը, ուրիշներինը համարեա չ'եր էլ մնացել և նոքա սարսափի մէջ էին: Բայց Դանիելը մըսիթարում էր բոլորին:

Աստծու օգնութեամբ խնայողութիւնը և աշխատանքը կ'աղատեն ձեղ ձեր պարտքերից: Լացեք

ինձ և ամեն բանում էլ յոյս ո՞նեցէք:

Նա նորից գնաց քաղաք, որտեղ յաջողուեց հասակաւորների և երեխաների համար շուտով գործ գտնել: Կիչ որ խնայում էր, նա նշանակում էր տեսրակի մէջ:

Շատերը նրան էին յանձնում պահելու իրանց դրամները և շուտով Դանիելի մօտ 100 մանեթից աւելի գումար հաւաքուեց: Նա մսածեց, ինչո՞ւ այդ գումարն առանց օգուտի մնայ և առաջարկեց քաղաքում մի ազնիւ մարդու, թէ և ամեն ամիս 10 կամ 20 մանեթ վերցնել որ նոցա համար տօկոսներ վճարի.

— Այս աղքատ և տնտեսող մարդկանց օգտին է լինում,—ասում էր նա:

Այդ մարդը հարուստ վաճառական էր և սիրում էր բարութիւն անել, այդ պատճառով սիրով համաձայնեց ընդունելու զրամները, իսկ Դանիելն ձշութեամբ նշանակում էր, թէ իւրաքանչիւրն իր գումարի համար որքան տօկոս էր ստանում:

Մեծ բազդ էր զիւղացների համար, որ այժմ աշխատում էին և դրամներ ձեռք բերում: Ոչ մի ժամանակ չ'են հիւանդանում, այն ինչ առաջ կիւրակի օրերը միշտ շոայլութեամբ և արբեցութեամբ էին անցկացնում և երկուշարժի օրերում չ'են կարողանում գործի գնալ: Եւ այնպէս մաքուր էին պահում իրանց, որ շատ սակաւ էին հիւանդներ լինում: յայտնի է, որ շատ հիւանդութիւններ անմաքրութիւնից և աղտոտութիւնից են ծագում: Աւրիշ շատ

գիւղացիներ էլ, երբ լսեցին խնայողական գանձարատնի և նրանից ստանալիք տօկոսների մասին, նրանք էլ սկսեցին շաբաթուայ մէջ հաւաքած դրամները բերել Դանիէլն յանձնելը ասելով.

—Վերցրէք սրանք, եթէ ոչ երկար ժամանակ չենք կարող մեր պարտքերը վճարել: Տանը բոլորն էլ անգործ են, չեն աւելացնում, այլ պակասեցնում են:

Ոմանք էլ մինչեւ անգամ կնոջը և որդիկերանցը քաղցած էին թողնում, որպէս զի շատ դրամ խը նայեն: Այս վշացրեց Դանիէլն: —Աւ բան է խը նայողութիւնը, —ասեց նա նրանց, բայց կնոջը և երեխաներին քաղցած թողնել չ' կարելի: Յագեցած մարդն աւելի ոյժ է ունենում և լաւ է աշխատում: Բայց ահա ես ձեզ ինչ կառաջարկեմ: շատ կտնայք, որոնք կարող են դաշտում աշխատել կամ մի կերպ դրամներ աշխատել նրանք իրանց ամբողջ ժամանակը խոհանոցումն են միայն փչացնում: Եթէ նրանցից մշկը բոլորի համար կերակուր եփէր, միւսներն ապատ կը լինէին և փայտ էլ շատ կը խնայուէր, որովհետեւ մի հնոցը, որ կը վառուի երեսուն ընտանիքի համար, քսան անգամ պակաս տաքովթիւն կը պահանջի, քան թէ երեսուն հնոցը: Այս միջոցով շատ դրամ կաւելանայ: Այդ ընդհանրական խոհանոցում բացի դրանից կը խնայուի և՝ աղ, և՝ իւզ, և ամեն ինչ: Փորձենք...

Սկզբում տասն և եօթ ընտանիքներ համաձայն նեցին: Դանիէլը խնդրեց ջրաղացրանի կնոջը, որ արժան թանեսպաս եփի և շաբաթը երեք անգամ՝

ցանկացողների համար՝ միս: Խւրաքանչիւր ընտանիք հնոցի համար հերթով վայր էր բերում և ընտանիքից օգնականուհի: Ջրաղացրանի կինն ամեն ինչ կարգադրում էր, իսկ միւս կանայք նրանից սովորում էին կերակուրները լաւ պատրաստել: Նոքա բուլորը (նոցա թւում ջրաղացրանը և Դանիէլը) ուտում էին լաւ, ախորժակով և կուշտ, քան թէ միւսները գիւղում և բայց այդ՝ քիչ դրամ, չարչարանք և փայտ էր գործ դրում: Շատ ուրիշ ընտանիքներ էլ ցանկացան նրանց հետ լինել: Ջրաղացրանի կինը հաղիւ էր կարողանում կարգադրութեան վերայ հսկել:

Այդ ժամանակ պանդոկապետ Կոնստանդինն էլ նրանց նման, սկսեց գիւղացիներին իր պանդոկը հըրաւակել, միայն իր օգուտի համար, բայց «դաշնակցող» գիւղացիները ջրաղացրանի մօտ մնային: Առքա իրանց միջեց ընտրում էին ամենախելացիներին և նրանց էին յանձնում գնելը և գործածւող իրեղինների վերայի հսկողութիւնը, որովհետեւ նոքա չ' էին ցանկանում այդ գործադրուող միջոցը միայն մէկին օգտակար լինի, այլ առհասարակ բոլորին:

Թէ Ի՞նՉՊէս ԳիՒՂՈՒՄ ԳԻՆԵՑՆԵՐՆ ՈՉՆՉԱՆՈՒՄ ԵՆ
ԵՒ Ի՞նՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԳԻՂԱՑԻՆԵՐՆ ԱՅԴ ՄԱՍԻՆ.

Բայց գինեվաճառ Կոնստանդինի գործը յաջող չէր դնում: Նա սկսեց այնպիսի գարշելի լանդակ (քաշով) և կաղամբաթան եփել որ ոչ չուղեց.

իւր զբամները փչացնել և պայմանաւորուեցին մի այնպիսի ընդհանուր խոհանոց կազմել, ինչպէս որ ջրաղացքանինն էր: Բայց այնահել էլ գործը համաձայնութեամբ չը գնաց, նոքա սաստիկ խափում էին իրար և ոչ մի տեղ էլ կարդ չը կար: Այդ ժամանակն էլ սովորակի էր և մի քանի բարեպաշտ մարդիկ գրամ էին ժողովն և յանձնել Կոնստանդինին և միւս տանուտէրներին, որ ձրի կերակուր բաժանեն աղքատ գիւղացիներին: Բայց անգութ և անազնիւ տանուտէրներին այդ գումարները բաժանեցին գիւղացիներին, իսկ ալիւրը և ցորենը այնպիսի թանգ գընով սկսեցին վաճառել, որ բոլոր զբամներն անցան նոյցա գրպանը:

Սաստիկ չքաւորութիւնից գիւղացիները ստիպուեցին վաճառել իրանց խոռոր, անաստանները և մինչև անգամ հողը:

Այսեղ Կոնստանդինն կրկին տանուտէրների հետ պայմանաւորուեց, որ ամեն ինչ արժան գնով առնեն: Ահա թէ ինչ արեցին. մէկը միւսի յետեից նոքա գնում էին վաճառողի մօտ և առաջարկում էին ամենացածր գին, յետոյ աւելացնում էին մի չնչին բան և հեռանում էին ասելով, որ մեր տուածըն էլ դեռ շատ է այդպիսի վատ ապրանքի համար: Այսպիսավ նոքա վայր էին գցում արժէքը: Նրանց փորձառու էին համարում, այդ պատճառով ոչ որ աւելի չ'էր առաջարկում: և եթէ մէկն առաջարկում էր, մանաւանդ եթէ նա էլ պարտապաններիցն էր լինում, սպառնալիքներով վախեցնում էիննրան.

— Եթէ դու կանենում ես բարեկամիս ապրանքը գնել, նախ քո պարտքը վճարիր:

Ահա այդ տեսակ անազնիւ Ճանապարհներով էր հարստացել Կոնստանդինը, բայց անարդար հարստութիւնն օգուտ չ'է բերիլ: Նա միշտ պահանջներ ունէր գատարաններում: Ընդհանրապէս գիւղում շատ դատեր և վէճեր կային: Գիւղացիները միշտ վիճում ու գանգաւուում էին, և մինչև վերջին կոպէկը շըրջում էին բոլոր գատաստանական տաեանները, իսկ այնուհետեւ սկսում էին երկրից երկիր թափառել.

Դանիէլը յաճախ համոզում էր նրանց՝ վէճերը համաձայնութեամբ, սիրով վերջացնելու, որի համար պատում էր.

— Մէկ անգամ երկու շներ մի ոսկը գտան և կըռւում էին, թէ ով պէտք է վերցնի այն: Մինչդեռ նրանք կուռում էին, մի երրորդ շուն, ամբողջ ժամանակ հետամուտ լինելով նրանց, վերցրեց ոսկը և վագեց, փախաւ:

— Այսպէս է լինում համարեա մարդկանց բոլոր պահանջների-վէճերի ժամանակ:

Ընդհանրապէս Կոնստանդինի գատարաններում ունեցած գործերը յաջող հետեանք էին ունենում, բայց վերջին անգամ հարեւան գիւղի հետ սկսած մեծ գործն անյաջող անցաւ նրա համար և նա բոլորով վին քամբաղդացաւ: Նրա բոլոր հարստութիւնը վաճառեցին պարտքի փոխարէն և գիննետունը փակեցին: Այսպիսով գիւղումը միայն Միքոնի պանդոկը մնաց, իսկ միւսները արդէն վաղուց փակել էին իրանց գիւ-

նետները:

Ծերունիները շարժում էն իրանց ալեզարդ գլխները և ասում:

— Վատ ժամանակներն են հասել, այսուհետեւ մեր գիւղը լաւ օր չէ տեսնելու:

— Դուք՝ ի զուր էք մտածում, որ վատ ժամանակներն են հասել, — ընդդիմախօսուց նրանց Դանիէլը, ես շատ երկներ եմ ման եկել շատ գիւղեր տեսել և տմէն տեղ, ուր շատ գինեաներ են եղել այնտեղ մեծ ալքառութիւն է ընկել, և մարդիկ չեն ապրում այնպէս, ինչպէս որ հարկաւոր է: Խոկ եթէ գինեաները չը լինեն, գործերն լաւ ընթացք կունենան, դրամներն էլ գրպաններում կը մնան և գինեաների փոխարէն գիւղացիներն ժամանակն իրանց աներում կնոջ և երկխանների հետ կ'անցկացնեն, խոկ եթէ պատահի խմել կը խմեն մի բաժակ միայն օղի, և ոչ թէ մի ամբողջ տակառ, ինչպէս որ այդ այստեղ պանդոկումն է լինում:

Ծերունիները քիչքիչ հասկանում էն Դանիէլ ասածները. նոքա իրեւ պատճառիսն՝ հաւանական գլուխ էն շարժումնրան և համուլում էն, որ արգարե, ճշմարտութիւնը Դանիէլի կողմն է:

ԿՈՅԾԱԿԲ ԽՓՈՒՄ Է ԳԱՀՍՆԱՑԻ ՏԱՆՑ.

Այդ ժամանակներում մի սարսափելի գէպք է պատահում. — Կայծակը խլացուցիչ ճայթիւնով և գոռողով խիսում է քահանայի տանը: Թէպէս ոչինչ չայ-

րեց և ոչ մէկին չը տպանեց, բայց ծերունի քահանան մի քանի օրից յետոյ մեռաւ այդ արհաւիրքի երկիւղեց: Մասպաշտ գիւղացիները զարհուրում և զանազան նախապաշարովակն բացալրութիւններ էին տալիս: Դանիէլն, վշտացած նոցա անկրթութեան վերայ, ասեց նրանց. — Անմիտ են ձեր այդ բացալրութիւնները: Կայծակին ձգեց հողմացոյցի վերայի երկաթէ գնտակիկը: Բնութեան օրէնքով երկաթը և ուրիշ մետաղներ (մանաւանդ սուր ծայր ունեցողները) կայծակին միշտ ձգում են դէպ իրանց: Բայց Աստուած Խւր ամենաիմաստութեամբ մըջոց է տըւել, որով մարդիկ կարող են ազատուիլ կայծակի հարուածից, այն է եթէ ճանապարհին երկաթ պատահի, որով կայծակը կարողանայ գետինը գնալ, այն ժամանակ նա վնասակար չէ լինիլ:

Խւր խօսքերի ճշմարտութիւնը ցոյց տալու համար, Դանիէլը նրանց հետ վեր բարձրացաւ քահանայի տան տանիքը: Այսակեղ նրանք տեսան հողմացոյցի այրուած փոքրիկ զնդակը և թէ ինչպէս կայծակն այդտեղից անցել էր կղմինդրի վերայ դուրս ցցուած բեկոններով դէպի յած տանիքը և այդ տեղեց էլ երկաթէ լարով, որով զանդահարում էին բագումը, անցել էր գետինը: Եւ դրանից էր, որ տունն անմիսան էր մնացել, եթէ ոչ բոլորովին կ'այրուէր: Բայց նկատեց, որ գիւղացիներն աւելի սկսեցին վախենալ որումունքի երկիւղեց, այն ժամանակ ասեց. — Ի զուր էք դուք վախենում: Որումունքը աստուածային օրհնութիւն է երկրի համար: Նա մաքրում

է օդը և պատղաբերում է հողը: Դատարկեցէք վաս-
խնեալուց և գնացէք ձեր տանիքների վերայ 7 վեր-
շոկ բարձրութեամբ սուր երկաթի մի կտոր ցցէք և
կապէք նրանից սագի վետուրի հաստութիւնից ոչ
աւելի երկաթէ լար ու այդ լարն տանիքի երկայնու-
թեամբ անցկացլէք ցած մինչև գետինը մի խոնա-
տեղ: Դուք դրանով կայծակի համար կը շինէք մի
ճոնապարհ, որով նա առանց վկաս տալու, կ'անցնի
հողե մէջ և չէ այրիլ ձեր աները, եթէ լարը ամ-
բողջ կտոր ու միշտ մաքուր և ոչ ժանգոտած լինի:
Նս արդէն մի լաւ շանթարգել եմ շինել որովհետեւ
մկրտում կինս էլ էր որոտմանքից վախենում:

Գիւղացիներից շատերը լսում էին Դանիելի տը-
ւած խորհուրդը, ոմանք էլ իրանց տխմաբութեամբ
ասում էին.

—Միթէ այդպիսով չենք գրգռիլ Աստծու բարկութիւնը։ Նա ուղարկում է իւր կայծակը, ում վերաց որ կամենում է, իսկ շանթարդիկեց կարող է անձրեւ չը կալ և ցորեն չը բռննել։

— Յիմարներ, — ասեց նրանց Դանիէլը, — Աստուած
մեզ խելք է տուել, որ պաշտպանենք մեզ փորձանք-
ներից և չըկայ չարիք աշխարհում, որից փրկուելու
համար մեզ միջոց տուած չը լինի Նա: Այսպէս Նա
տուել է մեզ ջուր, որ հանդցնենք կրակը, երկութը —
որ կայծակն արգելենք... Մենք պարտաւոր ենք գիտե-
նալ և չնորհակալութեամբ գործ դնել այդ միջոց-
ները. ով այդ չ' անում, ինքն իրան պատժի է են-
թարկում:

Հասկացող գիւղացիները հաւատում էին այդ խելօք խօսքերին և շանթարգելներ սկսեցին շինել:

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՑ.

Ծերունի քահանայի տեղ նշանակուած էր 27
տարեկան երիտասարդ հայր Պետրոսը։ Սկզբում նա
շատելին հաճոյ չ'երևաց, նրանց գայթակցիցնում էր
նրա դեռահասութիւնը և հասարակ խօսելը։ Բայց
շուտով հասկացան, որ հայր Պետրոսն երիկային կո-
չումը կատարող մի անձն է և սկսեցին գնահատել
նրան։ Եւ Ճշմարիտ, Նա, Քրիստոսի նման, սիրում
էր առհասարակ աղքատներին եւ յանցաւորներին
եւ նա այցելեց գիւղի բոլը ընտանիքները և այնու-
հեաւ օր չ'էր անցնիլ որ նա չը լինէր ոորա կամ
նորա տանիք։ Համեստ, համբերող էր նա և ընդու-
նակ՝ սիրոյ և արդարութեան լուսով լինելու նոյն
իսկ ամենակամակոր սրտերը։ Միշտ բարի խորհուրդ-
ներ էր տալիս, խաղաղացնում էր թշնամիներին, մը-
խիթարում էր տիսուր և վշտակիր մարդկանց։ Մին-
չե անդամ երբ նա կշտամբում էր, լսում էր սիրոյ
ձայն՝ որ կը խրատուին։ Երբ կիւրակի օրերը քա-
րող էր խօսում, — զարմանալի բան, ամեն-մէկին թը-
ւում էր, որպէս թէ միմիայն իրան հետ է խօսում։
իւրաքանչիւրը լսում էր իւր խղջի պատմութիւնը,
բացադրուում էր իւր յանցանքների գարսնիքը ու նրա
մէջ ընկնելու պատճառը և թէ ինչպէս մոռացել է
Աստծուն։ յանկարծ սրտի մէջ ցանկութիւն է զարթ-

նում՝ ուղղուելու և յուսով մօտենում՝ է Երկնաւոր
Հօրը: Այսպէս հայր Պետրոսի յորդութեամերը և խօս-
քերը շատ խորն էին թափանցում ամեն-մէկի սրտի
մէջ, լցնելով այն՝ համեստ ուրախութիւններով, սի-
րով գէպի Աստուած և բոլոր մարդիկ:

Մէկ անգամ՝ հայր Պետրոսն այցելեց զիւղական
դպրոցը, որ ծանօթանայ նրա կազմակերպութեան
հետ: Մաքրութիւնը, կարգերը, խաղաղութիւնը և
ուսուցչը ու աշակերտների եռանդուս գործունէու-
թիւնը միանգամայն ապշեցրին նրան: Դասերի վեր-
ջում նա մօտեցաւ ուսուցչին, պինդ սեղմեց նրա
ձեռքը և այն ժամանակուանից նա սկսեց Դանիէլին
խորը յարգել և սիրել:

Հայր Պետրոսի գալուց չէր անցել կէս տարի,
բայց նա բարեկամ և խորհրդառու էր իրան բոլոր
այցելողներին: Նա մարդկանց շատ բարիքներ էր ա-
նում, միայն այնպէս ծածուկ, որ քչերը զիտէին այդ
մասին: Հայր Պետրոսն աւելի յաճախ այցելում էր
բոլոր հիւանդներին: Նա ունէր մի փոքրիկ գեղա-
տուն, որ կազմուած էր տանը սպատրաստած մի քա-
նի տեսակ հասարակ գեղերից, որնցով շատ անգամ
յաջորդում էր թեթևացնել հիւանդների տանջանք-
ները: Նա սիրում էր բժշկաբաններ կարդալ և թէ՛լ
բժշկականութիւն չէր սովորել, բայց կարողանում էր
բժշկել շատ հիւանդութիւններ:

Այսպէս նա ապրում էր Քրիստոսի և նրա ա-
շակերտների վարդապետութեան համաձայն, բժշկում
էր հիւանդներին և քարոզում էր Աստծու արքայ-

ութիւնը:

Քիշքիչ արգելում էր զիւղացիներին գործածել
շատ մնութիւապաշտական միջոցներ և վնասակար զե-
զեր: Նոքա էլ այլ ևս չ'էին վազում կախարդների մօտ
և չ'էին հաւատում յիմար պառաւների և խաթերա-
ների հիւանդութեան համար ասած լոկ խօսքերին,
այլ գալիս էին հայր Պետրոսի մօտ, որ ձրի էր բժ-
ժշկում և բոլորից լաւ: Վանդակաւոր և ծանր հի-
ւանդութիւնների համար նրա խորհրդով քաջպից
գիտնական բժիշկներ էին հրաւիրում:

Հայր Պետրոսն ուրիշ շատ տեղեկութիւններ էլ
գլուէր. օրինակ՝ նա լսու մեղուապահ էր. բայց տա-
նը փեթակներ չ'ունէր, այլ ընծայել էր աղքատնե-
րին և սովորեցնում էր նրանց, թէ ի՞նչպէս պէտք է
հոգ տանել այդ օգտակար միջատների վերայ: Նա
միայն պարեր (մեղուների) էր հաւաքում, որ նը-
րանցից վիթակներ կազմի ուրիշ չ'ունեցող զիւղա-
ցիների համար: Այս գործը մեծ յաջողութեամբ էր
առաջ գնում, այնպէս որ զիւղացիներն իրանց մեղ-
ուապահութեամբ շուտով յայտնի եղան ամրող զ
գաւառի մէջ: Նրանք մեծ քանակութեամբ մեղք և
մեղքամոմ էին քաղաք տանում և վաճառելուց մեծ
գումարներ էին ձեռք բերում: մինչեւ անգամ նրանց
մեղքի և մեղքամոմի զինը բարձրացաւ, որովհետև
մեծ մասամբ այդ զիւղի մեղքից և մեղքամոմից էին
գնում:

ԶԵԿԱՅ ԶԱՐԻՔ ԱՌԱՆՑ ԲԱՐԻՔԻ.

Այդ ժամանակներումն էր, որ հարեան գիւղերից մէկում մեծ անբաղդութիւն պատահեց: Այս ցերեկը, երբ մարդիկ դաշտում աշխատելիս են լինում, հրդէն է ընկնում գիւղի մէջ և թէև օգնութեան են հասնում, բայց վեց բազեր բոլորովին այրում են: Այդ անբաղդութիւնն պատճառն երեխաների անզգութութիւնն է լինում, որոնք առանց մեծերի հսկողութեան մնացել էին տանը:

Մէկ ուրիշ անգամ, երբ գիւղացիներն աշխատելուց վերաբառնում էին տուն, մի խրձթի մօտ հաւաքուած մեծ ամբոխ տեսան: Խրձթից լսում էին լացի և հեկեկալու բարձր ձայներ, և երեաց, որ չորս տարեկան մի փոքրիկ աղջիկ ընկել էր ջրհորը և խեղդուել նրա մէջ: Բոլորն էլ սիրում էին բարի և սիրելի աղջկան և սաստիկ ցաւում էին նրա համար:

Այս բոլոր անբաղդութիւններն գիւղացիներին մոռացնել տուին հայր Պետրոսին: Սա գնաց իւր բարեկամ Դանիէլի մօտ և ասեց.—Անշուշտ հարկաւոր է կարգադրել, որ գործի դնացողներն առանց հըսկողութեան չը թողնէին իրանց որդիներին: Պատահած անբաղդութիւններն իմ մէջ միտք յղացրին փոքրահասակների համար ապաստանարան հիմնել, որ արդէն շատ քաղաքներում գոյութիւն ունեն և թանգ չ'արժեն: Երեխաների վերայի հսկողութիւնը յանձնում է մի որ և է յուսալի կոտջ, որը կերակրում է

նրանց՝ իրանց աներից բերած ուտելիքներով, խաղում է նրանց հետ, քիչ-քիչ սովորեցնում է նրանց անուանել իրանց շրջապատող առարկաները և այդպիսով հետզհետէ կազմուրում է նոցա Փիզեքական և մտաւոր ոյժերը: Նա այնպէս պարզ ցոյց տուեց այդ տեսակ ապաստարանների օգուտը, որ Դանիէլը բոլոր սրբութ խոստացաւ օգնել նրա կազմակերպութեան:

Ապաստարանի վերահսկութիւնը համաձայնեց յանձն առնել Սարիսմի բարեկամուհիներից՝ Եկատերինէն, որ շատ լաւ կին էր: Ապաստարանի համար տեղ ընտրեցին Կոնստանդինի նախկին գինեստունը, որի մօտ գտնուում էր երեխաների վազելու համար յարմար մի ստուերաշատ այզի: Սենեակի վարձ և Եկատերինէն ուոճիկ բարի մարդկանց նուիրադրամշներից պէտք է վճարեին: Որոշեցին փորձ անել:

Քիչ ժամանակի մէջ երեխաների թիւն այնքան բազմացաւ, որ Կատարինէն ստիպուեցաւ օգնականներ ունենալ. մի քանի կանայք յանձն առան հերթով օգնելու նրան:

Որքան ուրախալի էր նայել կայտառ երեխաների խմբին, նրանց խաղերին, վագելուն, նրանց ուշացրութեամբ գայեակի ուտամութիւններ լսելուն. քաղցր էր լսել նրանց ուրախ ծիծաղը և խօսակցութիւնը:

Ե՞նջ են ԽօՍՈՒՄ Զ...Պ...ի ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՄՌԱՒՆ.

Քաղաքում և ըլջակոյ գիւղելում շատ զբոյցներ էին պարտում Զ...Պ...ի գիւղացիների մասին։ Սկզբում նրանց անպիտան, արբեցող, պարտքեր չը վճարող մարդիկ էին կոչում, իսկ այժմ միանգամայն ապշեցնում էր բոլորին նրանց այնպէս փոփոխուիլը։ Գիւղացիները միշտ աշխատում էին, ամառը վաղ առաւտուանից բոլորն էլ գաշտումն էին լինում, աշխատանքն այնպէս եռում էր նրանց ձեռքում։ միքանիսը կրում և աթարի ամրոցներ էին բարձրացնում, ուրիշներն ջրում էին խոտերը և այլն։ Մաքրութիւնը և խոտակութիւնը փայլում էր նոցա փողցներում և խրճիթներում։

Քաղաքում ամենից առելի այդ գիւղի մշակներից էին վարձում, ածնավաճառում նրանցից էին գըլ խուռապէս առնում ուտելու պաշարեղէններ, որոնցով լիքն էր լինում տօնավաճառը, ինչպէս բանջարեղէններ, պտուղներ, վուշ կանեփ, հացահատիկներ, իսկ աշնանը՝ լաւ տեսակի ինձորներ։ Տեղը և մեղամնձը նոյնպէս շատ էր, քան թէ միւս գիւղերում։ Բացի այդ մեծ քանակութեամբ պանիր և զովակն թարմ իւղ էլ էին վաճառում։ Հարեան գիւղացիները գիտէին, որ նրանց հօտերը շատ չեն, և զարմանում էին, թէ այնքան մեծ քանակութիւնն որտեղից պէտք է ստացուի։

Այդ բոլոր հմտութիւնները Դանիէլն էր նրանց ոռվորեցրել։ Նա ցոյց էր տալիս իրան աշակերտներին՝

թէ ի՞նչպէս պէտք է պատուաստել ծառը, սովորեցնում էր նրանց միջոցներ՝ թէ ի՞նչպէս քիչ կոփեր ունենալով՝ կարելի է իւղ, պանիր ստանալ մեծ քանակութեամբ։

— Ձեր կոփերը քիչ եկամուտ են տալիս, — ասեց նա իւր երեսուներկու դաշտակ՝ ցներին։ — Հաւաքուեցէք և պայմանաւորուեցէք միւսների հետ, ժողովեցէք քառասուն, յիսուն կով և մի այնպիսի ընդհանուր գործ սահմանեցէք, որ ամեն-մի կով 10, 15 մանէթ զուտ եկամուտ բերի։

Սկզբում գիւղացիներն չը հասկացան Դանիէլն, բոյց յետոյ շնորհակալ եղան նրա առած լաւ խորհրդգի համար։

Ժողովեցին 40, 50 կով, ընտրեցին մի սրամիտ մարդ, Միքայէլն, որ պանիր պատրաստել գիտէր և գործը յանձնեցին նրան։ Միքայէլը յայտնի էր իւր աղնութեամբ։

Կոնսաւանդինի նախկին դշնետան մէջ յարմար շնութիւն գտան կաթնաանուեսութեան համար։ Փայտը գնում էին ընդհանուրի հաշւով։ Նշանակուած օրը բոլոր մասնակցողները կաթն էին բերում մաքուր անօթներով — այսպէս խիսու էր պայմանը։ Միքայէլը նշանակում էր իւրաքանչիւրի բերածի չափը։ ովքեր չէին մասնակցում, նրանցից կաթ չ'էին վերցնում։ Հաւաքած բոլոր կաթնից Միքայէլը հիանալի պանիր և իւղ էր պատրաստում։ բայց դրանից շիճուկ (թան) էլ էր մնում։ Այնուհետեւ իւրաքանչւը մասնակցող իրան բերած կաթի չափ իւղ և

պանիր էր ստանում, որ քաղաքում վաճառելով՝ ձեռք
էր բերում զուտ դրամներ:

Սկզբում այս բոլորը նրանց անհասկանալի էր
երեսում. նրանք կարծում էին, որ վասա կ'ունենան,
բայց տարուայ վերջում երևաց, որ մի կտիլից 15 մա-
սնէթ եկամուտ է ստացուել: Խւրաքանչիւր ընտանիք
առանձին չ'էր կարող այդքան արգիսնք ստանալ, ո-
րովիշետեւ կաթն ինչքան որ թարմ և շատ է լի-
նում, այնքան աւելի լաւ պանիր և իւղ է ստացուում.
բացի դրանից փայտը ինայւում էր և կաթը իւղ
պատրաստելիս չ'էր փչանում, ինչպէս որ այդ առաջ
էր լինում՝ ջակ-ջոկ պատրաստելիս:

Մի քանիսը սկզբում փորձեցին խարեբայութիւն-
ներ անել բայց նրանց ընդհանրութիւնից խսկոյն
մերժեցին—կանոններն այդպէս խիստ էին:

Այդ ընդհանրական գործն և այն օգուտն ու-
նէր, որ անասունների վերայի հոգատարութիւնը
չափազանց թեթևացել էր:

Այսպէս առաջ էին գնում Զ...Պ...ի գիւղացի-
ների գործերը: Նրանք ծիծաղում էին իրանց մշջ,
որ ուրիշները կարծում էին, որպէս թէ նրանք ռո-
կի շնուրու արհեստ գանեն:

ՆՈՐ ՏԱՆՈՒՑԵՐԻ ԵՒ ՊԱՆԴՈԿԱԳԵՏ ՄԻՔՈՆԻ ՄԱՍԻՆ.

Այնուամենայնիւ Գանիէլը կախարդ է—ասում
էին Զ...Պ...ի բնակիչները, երբ նրան մի որ և է
նոր ձեռնարկութիւն էր յաջող ում:

Եւ ինչ որ սկսում էր, համարեա ամեն անդամ
էլ յաջողուում էր նրան, որովհետեւ սկսելուց առաջ
մտածում, քննում էր տունց շտապելու և իւր ոյ-
ժից վեր ոչ մի գործ չ'էր ձեռնարկում:

Թէ Գանիէլը և թէ կինը միշտ ծանրաբեռն-
ուած էին գործերով, բայց ուրիշներն օգնում էին
նրանց: Մինչև անդամ Գանիէլն ուսումնարանում
Յովհաննէս անունով մի երիտասարդ օգնական ունե-
ցաւ: Յովհաննիսի ծնողները շատ աղքատ էին. Գա-
նիէլը վերցրել էր նրան իրան մօտ գաստիարակելու
և սիրով սովորեցնուում էր ընդունակ, խելօք երիտա-
սարդին, այդ պատճառով Յովհաննէն էլ կարողա-
նում էր հմուտ ուսուցչի գաստիարակչուան ոգով
այնպէս քաղցրութեամբ պարապել երեխաների հետ,
որ սրանք ջերմ սիրում էին նրան:

Գանիէլն ուրախութեամբ տեսնում էր, թէ ինչը
պէս գիւղում բարեկարգութիւնները հետզհետէ տա-
րածում են—մարդիկ ազատուել են իրանց պարտքե-
րից և առաջուան խղճալի արթեցողներն այժմ հա-
րուստ գիւղացիներ են դարձել: Գանիէլի 32 զաշ-
նակիցներն և աշակերտները շատ էին օգնում բարե-
կարգութեանց առաջ գնալուն:

Մի քանի չարաբարոյ մարդիկ էին մասել մի-
այն, որոնց գլուխ Միքոնն էր, բայց շուտով սա էլ
զրկուեցաւ իւր բարեկամ՝ երլորդ տանուաէրից, որ
վախճանուեց: Հարկաւոր էր նորն ընարել: Ամբողջ
գիւղն երկու մաս բաժանուեց: Վատաբարոյ մարդիկ
ցանկանում էին իրանց միջից տանուաէր ընտրել իսկ

աղնիւ մարդիկ այդ բանին չ'եին համաձայնում: Ան-
բաւականութիւններ և վէճեր բարձրացան: Այն ժա-
մանակ զիմեցին հայր Աւտրոսին՝ խորհուրդ հարցնելու:
—Զարմանում եմ, —պատասխանեց նա, —ի՞նչպէս է,
որ ձեզանից ո՛ւ մէկն էլ չը մտածեց ամենաարժա-
նաւոր մարդուն՝ Դանիէլ ուսուցին տանուտէր ընու-
րել որն այնքան բարիքներ արեց ձեզ համար, իսկ
միւսները, ոչ թէ իրանց մերձականներին օգտակար
լինելու ցանկութիւնից են ուղում տանուտէր լինե-
լու, այլ հպարտութիւնից և փառասիրութիւնից:
Զէ կարելե տանուտէր ընտրել այնպիսի մարդու, որ
շատ պարտապաններ ունի, որոնք սախալում են նրա
հլու ստրուկներ դառնալու: Տանուտէրը պէտք է լի-
նի անկախ, ապնիւ, խելացի և գործունեայ մարդ:
Անաշառութիւնը պէտք է նրա առաջին առաքինու-
թիւնը լինի: Կաւ մոտածեցէք, ով ձեր մեռնելուց
յետոյ ինամք կը տանի ձեր ընտանիքների վերայ.
ով է նա, որ բոլոր սրութ առում է չարք և անար-
դարութիւնը. և վերջապէս ով է գիւղի մէջ այն լու
մարդը, որին սիրում և յարգում են դիւղացիները...

Հաճոյ թուեցին շտերին քահանայի խօսքերը
և ելր որ ժողովուեցին ընտրութեան համար, առա-
ջին տանուտէր Դանիէլին ընտրեցին, երկրորդ տա-
նուտէր ջրաղացբանին. բայց առ դժուար պաշտօն
համարելով՝ հրաժարուեց, որի փոխարէն ընտրեցին
Ստեփանին, որ մի հանդարտ, աշխատասէր մարդէր:
Բարկութիւնից պանդոկապետի աչքերը կսպանցին.
Նա գեռ յոյս ունէր, որ Դանիէլն էլ կը հրաժար-

ուէր, բայց նա ընդունեց պաշտօնը և չնորհակալու-
թիւն յայտնեց բոլորին՝ իրան յարգելու համար, իսկ
ուսուցչութիւնն առաջարկեց Յովհաննիսին:

Միրօն, խելակորոյս անյաջալութիւնից, վերա-
դարձաւ տուն, որտեղ իւր բարկութեան վրէժը նախ՝
կատուի վերայ թափեց, որ գգուելով մօտեցաւ նրան,
յետոյ՝ շան, որ ուրախ—ուրախ ցատկեց գէպի նա,
յետոյ՝ աղախնի, որ իսկոյն չը հասկացաւ նրա հը-
րամանը՝ օղի տալու և վերջապէս՝ կսոջ վերայ, որ
նկատեց, թէ Ստեփանն աղնիւ մարդ է:

ԱՂԲԸ ՊԵՏՔ Է ԴՈՒՐՄ ԱԾԵԼ ԳՈՄԻՑ.

Բայց Միրօնը փոխեց իւր դիտաւորութիւնը և
մի քանի օրից յետոյ շուապեց Դանիէլի մօտ և բա-
րեկամաբար ասեց.

—Այսուհետեւ մենք, Դանիէլ, եղբայրաբար կը
ապրենք և միշտ բարեկամ կը լինենք:

Մարիամը զարմացաւ այդ բարեկամութեան վե-
րայ: —Դանիէլ լու կը լինէր, ու չընդունէիր դու-
այդ պաշտօնը: Միրօնը խորամանի մարդ է, նա ու-
րոգայթներ կը պատրաստի քեզ համար... զգուշացիր
նրանից, Դանիէլ ասում էր Մարիամն ամուսնուն:

—Մի վախենալ, — պատասխանեց Դանիէլը,
համբուրելով նրան, — նա չար մարդ չ'է, այլ միայն
շողոքորթիչ և երկչոտ:

Շուտով նոր տանուտէրները ժողով կազմեցին:
Ժողովի սկզբում Դանիէլն և Ստեփանը պահանջեցին

(գիւղե) կառավարութեան մասնեանները և հաշեւները. բայց նրանք բոլորն էլ ասստիկ անկանոն զրբութեան մէջ էին: Կառավարութեան վերայ 1^{1/2} հազար մանեթ պարագ երեաց: Տեսհարկերի մէծ մասը փշացել էր անդիտակցօրէն, կառավարութեան մուտքի հաշեւը բարեխղձաբար չ'էր կարդաւորուած, իսկ ծախոսերի մասին հաշեւ տրուած չ'էր: Բանից երեաց, որ տանուանէրները հասարակական հողի մի մասն արժան գնով վաճառել են իրանց վերայ ու մինչև այժմ չ'են վճարել նրա գինը: Բայցի գրանից Միքոնը 11 տարի առաջ գիւղի կառավարութեան անունով վերցրել է 2000 մանեթ և այդ բոլորն դեռ նրան ձեռքումն են մնացել որոնց համար կառավարութիւնը տօկոսներ է վճարում:

Դանիէլը բարկացած ասեց.—Ես ոչ թէ տանուանէրների խորհրդի մէջ եմ ընկել այլ որ և է մի գոմի մէջ, որտեղ միայն կեղտ և անմաքրութիւն է տիրում: անշուշտ հարկաւոր է մաքրել այն...: Անիսիզներ, դուք կերիլ և խմել էք աղքատների հաշով, դուք կողովտել էք ամբողջ վարչութիւնը, իսկ բանտարկել միայն խեղձ մարդկանց...: Դուք միշտ բացագրութիւններ էք տալիս Աստծու և հաւատի մասին, իսկ ձեր հոգին սատանային էք վաճառել:

Մերօնը երկիւղի մէջ ընկաւ. նա նախկին ընկերների վերայ էր բարգում յանցանքը և արտասուելով ընկաւ. Դանիէլը ոտները, խնդրելով նրա ողորմութիւնը՝ 'ի սէր բոլոր սրբութիւնների՝ չ'անսրազդացնել իրան...:

Դանիէլն հենց նոյն օրն իշխանութեանը մի ծառուցում ուղարկեց, որով յայտ հանեց նախկին տանուանէրների բոլոր աւագակութիւնները:

Ամբողջ գիւղը յուգման մէջ էր և սպասում էր հետեանքին: Նատերը չ'էին հաւատում, որ նախկին տանուանէրներն այնպէս աւազակներ լինէին և Դանիի էլին էին մեզաղրում՝ անուանելով նրան բանսարկութ չարախօս մարդ:

Միքոն արդարանալու համար օգնութիւն խընդրեց իւր բարեկամներից: Բայց ոչ ոք չ'ուզեց այդ գործի մէջ խառնուել: Վերջապէս քաղաքից եկագատաւորը: Սին ժամանակ ամենին պարզուեց նրանց անաղնութիւնները: Միքոնին քննութեամբ յանցաւոր ձանաշեցին, իրաւունքներից զրկեցին և բանտ նրանեցրին: Նրա հարստութեան մէծ մասնվե էլ վճարեցին այն պարագը, որ նա գողացել էր կառավարութիւնից:

Ահա ի՞նչ ապագայ ունեցաւ հպարտ պանդոկապեալը.—անարդար հարստութիւնն օգուտ չ'է բերում, իսկ ամբարտաւանութիւնը մարդուն տանում է դէպի կորուստ: Դանիէլը նշանակուեց առաջնին տանուաէր, իսկ երբորդ տանուաէր ընտրուեց մի ուրիշ աղնիւ գիւղացի:

ՊԱՐՏՅԵՐԸ ՊԵՏՔ է ՎՃԱՐԵՆ.

Դանիէլը շատ հոգսեր և գործել ունէր թէ դաշտումը, թէ անտառումը և թէ բանջարանոցում:

Նա յոդնած և վստակած երեկոյեան վերադառնում
էր տուն: — Խեղջ իմ Դանիէլ՝ արամութեամբ ասում
էր նրան Մարիամը, — անկսակած, որ անշնորհակա-
լութիւնով և գառնութիւններով պէտք է քեզ վար-
ձադրեն քո բոլոր շարչաբանքների և զրկողութիւն-
ների փոխարէն:

Ով հասարակութիւնից ընտրուած է տանու-
տէր, իմ թանգագին, — պատասխանեց Դանիէլը նը-
րան, — նա պարտաւոր է արդարութեան և Աստծո-
մասին մտածել և ոչ թէ մարդկային ընծաների և
շնորհակալութիւնների:

Ցերեկ և գիշեր Դանիէլը միշտ այն մասին էր
մտածում, թէ ի՞նչպէս կարողանայ թեթեացնել կա-
ռավարութեան պարտքը, ի՞նչպէս վերացնի այս ծան-
րութիւնը խեղճ հասարակութեան վերայից: Եւ ահա
նա մէկ անգամ ժողովում ասեց. — Մեր հասարակու-
թիւնը $1\frac{1}{2}$ հազար մանէթ պարտք ունի. այնպէս
կարգադրենք, որ ոչ ոք իւր գրատնից չը վճարի
պարտքի համար...

Դիւղացիները ծիծաղեցին և գոչեցին.

— Այդ մեղ շատ ախրժելի խօսքեր են, հա-
ճելի է լսել և՝ շարունակութիւնը:

Դանիէլը շարունակեց.

— Մէնք մեծ արօտատեղ ունենք: Անասունների հօ-
տերն անօդաւահտ են գարձել այն հողը: Ոչ ոք չ'է
օգուում նրանից՝ ինչպէս որ հարկաւոր է: Ամուռ,
Ճիշտ է, հարուատ մարդկանց անասուններն արտծում
են այնտեղ բայց նիհար և քաղցած փորով են վե-

րադառնում տուն: աղըն էլ կորչում է, մի վնաս էլ
այլտեղ է լինում: Խսկ նա, որ կոմիր չ'ունի, ամե-
նելին չ'է օգուում այդ հողեց: Միթէ այդ արդա-
րութիւն է: Միթէ այդ հասարակական հող չ'է:
Չ'ո որ մենք հասարար իրաւունք ունենք նրա վերայ,
նթէ այդ հողեց իւրաքանչեւրը մի կտոր ունենար և
այնտեղ ցաներ առուոյտ կամ ուրիշ խոտ, այն ժա-
մանակ կենդանիների համար առելի ուտելիք կը ըս-
տացուէր: Բաժաննենք արօտատեղը մեր մէջ: Հողը
կը մնայ վարչութեանը, խոկ իւրաքանչեւր մարդ իւր
մասի համար վարձ կը վճարի կառավարութեան:
Այդ գրամմիներով կը վճարենք կառավարութեան պարտ-
քը և հասարակութիւնը կ'ազատուի այդ ծանրու-
թիւնից:

Գիւղացիների մէջ աղմուկ, խօսակցութիւն, ա-
զաղակ և վէճեր բարձրացան. Հարուստներն այդ
բաշխումն անարդարութիւն էին համարում և տում:

— Նա ցանկսում է աղքաններին հարսացա-
նել, խոկ աղնիւ մարդկանց աղքատոցնել, միւսներն
տում էին՝ կամենում է, որ հարուստները միայն ի-
րանց անասուններն արօտ ողարկեն: — մենք այդ չ'ենք
թողնիլ և այն:

Բայց մեծամանութիւնը, որ աղբի համար ա-
նասուններին տանն էին պահում, պահանջում էր
Դանիէլի ասածների համեմատ լինի: Հարուստները
գանգատուեցին իշխանութեան, խողբելով նրա հո-
վանաւորութիւնն իրանց իրաւունքներից դրկուելու
համար, բաց գատարանը մերժեց նրանց բողոքը:

Հարուստ գիւղացիներն աւելի Միքօնի համար էին խղճում: Նրա բոլոր յանցանքների մօտ զարձեալ Միքօնին օրինաւոր էին գտնում: Նրան չը պէտք է այդ զժրախտութիւնն պատահէր, մտածում էին նոքա, — նա պահպանում էր հին իրաւունքները և ափորութիւնները, իսկ Դանիէլը նարութիւններ մոցնող, առառածութաց մի ոմն է:

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՏՔԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ.

Դարնանը գիւղացիներին յաջողաւեց իրանց ձեռարկած միջոցի արդիւնքը ահանել: Արօտասեղը, որտեղ կովերը սկզբում հաղիւ կարողանում էին փոքր ինչ ուտելիք գտնելը այժմ ծածկուած էր խիտ խոտով: Իւրաքանչիւրն իւր մասի ըեղքով ոչ միայն վրձարում էր տօկոնները, այլ և մեծ օգուտ էլ էր ունենում: Հարուստներն նոր հասկացան, որ այդ միջոցով անսասունների համար աւելի ուտելիք են ձեռք բերում և կաթն ու աթտր:

Բայց Դանիէլը դրանով չը բաւականացաւ: Նա նորից մի բանի վերայ էր մտածում և՝ ի զուր չ'էր ամբողջ օրերով անսասում թափառում:

Հարուստ գիւղացիներն ատում էին:

— Հաւանական է, որ նա զարձեալ ցանկանում է մեզ հաւասարուել:

Բայց նոքա սիսալում էին:

Աերջապէս բոլորը հետաքրքրութիւնից ժողովին եկան, որ լսեն Դանիէլը նոր առաջարկութիւնը: Նա

առաջ անցաւ և բարձր խօսեց.

— Աւ կը լինէր, եթէ մենք բոլորովին պարտք չ'ունենայինք և տօկոսներ վճարելու փոխարէն՝ մենք այդ գումարները մեզ համար պահնիք:

Գիւղացիները ծիծաղելով պատասխանեցին.

— Դու մեզ օգտաւէտ հրաշքներ ևս առաջարկում...

Դանիէլը շաբանակեց.

— Ես և իմ ընկերները յանձն կ'առնենք վճարելու հասարակական ամբողջ պարտքը կամ նրա մեծ մասը, եթէ միայն կ'ընդունէք այն, ինչ որ մենք կ'առաջարկնենք ձեզ:

— Ահա տեսէք, գոչեցին գիւղացիները, — թէ նա ինչ կերպով է ուզում մեզ հաւասարուել:

Դանիէլը պատասխանեց նրանց.

— Նախ լսեցէք ինձ և յետոյ վճուցէք իրաւացի՞ եմ ես, թէ ոչ Մեր գիւղն ունի 100 տուն, իւրաքանչիւր տուն հասարակական անսառից տարեկան 4 սած էն վայտ է ստանում:

— Ճիշտ է, գոչեցին գիւղացիները:

— Ամեն մի տուն վայտ կը խնայի, եթէ նրանից քիչ վասի իւր անտեսութեան մէջ:

Գիւղացիները սկսեցին քըթմնջել:

— Աւ ես տում, բայց չ'ենք կարող ասպիրատուսացիւր հագի և շըջել ամբողջ մի գար կեղտոտ հագուստներով:

— Կան գիւղեր, — պատասխանեց Դանիէլը, — որ այնքան անտառներ չ'ունեն, ինչքան մենք, բայց նը-

բանք այնպէս են կառավարւում, որ վաճառելու էլ փայտ են ունենում և դրա համար նոքա մեղանից աւելի հարուստ են:

Դիւզացիները տարակուսանքից սկսեցին քորել իրանց ծոծրակները, երբ լսեցին Դանիէլի խօսքերը: —Աչա թէ նրանք ինչպէս են կառավարւում, —շարունակեց Դանիէլը... մի քանի ընտանիքներ հաց թիւլու համար մի հնոց են ունենում: Ամեն-մէկն այնտեղ հերթով բերում է իւր խմօրը և որովհետեւ հնոցը միշտ տաք է լինում, այդ պատճառով քիչ փայտի պահանջ է լինում: Աչա այս է, որ կոչում է նոր տնտեսութիւն: Խոկ մենք մինչեւ հիմայ այդ բանին ուշադրութիւն չենք դարձել. մենք չափազնց ծոյլ ենք կամ տգէտ: Եթէ մի քանի մեծ հընցների փոխարէն, որոնք անհրաժեշտ են հաց թրիւլու համար, ունենայինք մի ընդհանրական հնոց, Ե՞նչքան փայտ կը ինայտէր: Փայտ վառել, նշանակում է դրամներ փառել: Բացի դրանից, —շարունակեց Դանիէլը, —ուրիշ դիւզերում վաղուց կազմուած են ընդհանուր լուսցարաններ, որոնցով օգուրուում է իւրաքանչիւր ընտանիք, որով դարձեալ փայտ է խնայեւում և հնոցներն այնպէս շուտ նորոգութիւն չեն պահանջում: Աչա մենք ևս առաջարկում ենք կառավարութեան հաշումը հնոց և լուսցարան շինել: Գուք Ե՞նչ կ'ասէք այդ բանի համար, կամենում էք բոլորդ էլ օգնել:

Կրկին քըթմնջումն և աղալակ բարձրացաւ. իւրաքանչիւրը վիճում և զուռում էր իւր համար. բայց

ձայներ հաւաքելիս՝ մեծ ամասնութիւնն ընդհամուր հնոց և լուսցարան ցանկացով դուրս եկաւ:

—Ապրէք աղաղակեց նրանց Դանիէլն ուրախացած, —ձեր վճիռը ձեզ համար մեծ օգուտ կը բերի: Լսեցէք այժմ իմ փերջին առաջարկութիւնը: Այժմ իւրաքանչիւր ընտանիք 4 սաժէնի փոխարէն կը բաւականանայ Յ սաժէն փայտով, մեզ մօտ մի սաժէն փայտը Յ մանէթ արժի, նշանակում է 100 տանից մենք մի տարում 300 մանէթի փայտ կը տանանք, իսկ 10 տարում՝ 3000 մանէթի, և կը վճարենք մեր պարտքը: Աչա թէ ինչպէս կ'անենք, որ այդ շուտ լիներ, անտառի մի գեսեատինը տարեկան մի սաժէն փայտ է տալիս. Եթէ մենք տարեկան հաւաքենք 100 սաժ:, այն ժամանակ 10 տարուայ մէջ կունենանք 1000 սաժ: Բայց մի խորհուրդ. — փոխանակ 10 տարի սպասելու (և վճարելու տօկոսները), աւելի լաւ կը լինի կտրել 1000 սաժէնի փայտ և միանգամից վճարել դրանից ստացած գումարով հասարակական պարտքը:

ԱՄԵՆ ԻՆՉ ԼՈՒ Է ԳՆՈՒՄ.

Դանիէլի ՅՅ դաշնակիցներն էլ էին մասնակցում հասարակական լուսցարանի և հնոցի շինութեանը. նոքա փայտ էին կտրատում, աղեւս, կիր, քար կը բում, միաբան գործում և շատ անգամ խօսակցում էին, թէ ինչպէս պէտք է հերթակալեն: Դանիէլը մի հմուտ հացագործ գտաւ և աշնանք, զարմանք

զիւղացիների, լուացարանը և հնոցը պատրաստ էին: Դրացիներն ամեն կողմից հաւաքւում էին և հետաքրքրութեամբ նրանց նայում: Հատերը ծիծաղում էին, որ այդ նոր միջոցներով օգուտ չ'են ունենալ: Բայց աշա եկաւ ձմեռը՝ սառնամանիքով և բուք բուրանով. զիւղացիներն հրճուում էին, որ նոր հնոցներն այնպէս լաւ տաքայնում էին իրանց և օգտաւում էին թէ հնոցը և թէ լուացարանը: Վաճառելով խնայած փայտը, նոքա յիշեցին Դանիէլի խօսքերը. վասել փայտը, նշանակում է վասել դրամը: Նատ ուրիշ զիւղացիներ էլ ցանկացան և հնոց իրանք իրանց հիմնեցին այդ տեսակ հնոցներ և լուացարաններ:

Երբ գարնանը հարկաժողովն եկաւ, դժուար երեաց իւրաքանչեւրին միանգամից երկու մասնէթ վըճարելու. նոքա մուարերեցին Դանիէլի խօսքերը և վաղեցին նրա մօտ:

— Տանուաէիր, — գոչեցին նրանք, — դու այլ ևս չ'ես խօսում այն մտսին, որ մենք անտառի փայտերով միանգամից վճռերէնք հասարակութեան պարաքը: Հենց դրան էր սպասում Դանիէլը:

Հասարակական ժողովում վճռուած էր փայտերի վաճառման մտսին ամեն տեղ յայտարարել: Անտառաքետի ներկայութեամբ և նրա տռաջնորդութեամբ կորատեցին մեծ և շատ խիստ տեղերից ծառեր: Ամեն կողմերից էլ զնողներ եկան, բայց փայտի գինը վայր չը ձգելու համար, վաճառեցին երկու տարուայ ընթացքում և ձևոք բերեցին 3000 մ,

այնպէս որ ոչ միայն ամբողջ պարաքը վճարեցին, այլ և կառավարութեան համար պահեստի գումար կազմեցին: Յետոյ հասարակական ընտիր սեպհականութիւն—անտառը պահպանելու համար, անտառապետը խորհուրդ տուեց այն բաժանել 30 մասերի, և որովհետեւ փոքրիկ ծառերի (լստենի, հացի, կեչի, չինարի) աճելու համար 30 տարի է հարկաւոր, իսկ գերանի համար՝ 100 տարի, ուստի իւրաքանչեւր տարի միայն մի մասի ծառերը պէտք էր կըտրել որ նոցա որդոց ժամանակ մէկ լաւ խիտ անտառ ստացուէր: Այդ պատճառով անտառից օգտուելու համար կազմեցին նոր կանոններ, որպէս զի ամեն-ինչ էլ արդարութեամբ լինէր—մնաչառ և ընդհանուրի օգտի համար:

ԽՆՉ ԵՆ ԱՆՌՈՒՄ Զ...Պ.../ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԻՐԱՆՑ ԱՊ-ՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Խնչ որ կատարւում էր Զ...Պ...ում, բոլորին էլ զարմացնում էր: Հասարակական պարաքը վճարուած էր, զիւղացիները հետղետէ հարստանում էին: Ստեկայն գեռ շատ անփայելու սովորութիւններ կային հին ժամանակներից մնացած: Դիւզումը գեռ ևս ապրում էին մի քանի ընտանիքներ, որոնք սովորել էին միշտ ողորմութիւն խնդրել որովհետեւ նոքա այնպէս էին աշխատանքից ծուլացել որ նորից գործ սկսելը գժուար էր երեսումնրանց: Մնացել էին գեռ ևս մարդիկ, որոնք իրանց աշխատանքները խմելով

Էին վշտցնում, երիխաներին էլ նոյնը սովորեցնում, որովհետեւ մանկութիւնից սոքա տեսնում էին այն վատ օրինակը, և քիչ յոյս կար, որ նոքա մեծանաւով լաւ մարդիկ գառնային: Այս բոլորը սաստիկ վշտցնում էին Հայր Պետրոսին:

— Զէ կարելի չարմ արմատախիլ անելլ — տառմ եր նա, — քանի որ զիւղի մէջ զցութիւն ունին այդպիսի վատ օրինակներ, քանի որ ծոյլերը կ'ապրեն իրանց մերձակաների հաշով: Մենք ունենք ապատանարան, բայց մեծ մասամբ անգործութիւնից են այնտեղ յաճախում և ապրում են հասարակութեան հաշով: Քանի անգամ ես զնացի այնտեղ՝ նրանց երաժիշտութիւնով, բայց բոլորովին՝ ի գուր եղան իմ ջանքերը: Ոչ քարոզը, ոչ յուգորները և ոչինչ ներդործութիւն չեն ստում այս մարդկանց վերայ: Հարկաւոր է այնպէս կարգագրել որ նոքա հասարակական հաշով չապրէին և այստեղ ապաստարանում քիչքիչ ընտելանային հեռանալ գատարկացքիկ կեանքից և սովորէին աշխատել:

Հայր Պետրոսի միաքը սաստիկ գուր եկաւ թէ Դանիէլին և թէ միւս տանտուերներին: Հայր Պետրոսը զրեց, ինչ որ մտածել էր և յետոյ նոքա միասին մէկ լաւ քննեցին այդ գործը և վճռեցին փակել հին ապաստարանը և բանալ մի ուրիշ տնանկանց՝ նոր սկզբունքներով: Տնանկանոցի համար գնեցին հիւսնական և ուրիշ արհեստական գործիքներ, ընտանիքների ընակուելու համար առանձին սենեակներ կարգեցին: Ամեն ինչ մաքուր և խտակ էր այն-

տեղ: Տնանկանոցում բնակութիւն գանողները պէտք է աշխատէին կառավարութեան հսկողութեան տակ: Նոցա տղաներին գիւղում կամ քաղաքում յանձնում էին ապնուութեամբ և աշխատասիրութեամբ յայտնի մարդկանց, որոնց մօտ մի որ և իցէ արհեստ էին սովորում: Տնանկանոցի աղքանները ձրի տանում էին հագուստ, ուտելիք, գրա փոխարէն աշխատում էին կառավարութեան համար: Որոշածից գուրս աշխատանքը մնում էր իրանց:

Տնանկանոցի մօտ գաշտ և բանջարանոց կար, այնտեղ ցանում էին կաղամբ, բողկ, սիսեռ, գետնասինոր, վարունկ, վուշ կանեփ, ու ցորեն և ուրիշ հացահատիկներ: Կանայք լու անում, կարում, մանում էին: Բոլորեքեան աշխատում էին մեկի համար և մէկը՝ բոլորի համար: Ոմանք որոշածից տելի աշխատելով քիչքիչ կարզացան յատուկ տնարարութիւն սկսել և գուրս գալ տնանկանոցից: Հայր Պետրոսը յաճախ նրանց մօտ էր լինում, խօսակցում էր նըրանց հետ և յորդորում էր զէպի Աստուած, զէպի մերձական սէր և աղնիւ, գործունեայ կեանք ունենալու, մտնում էր նոցա բոլոր կարիքների և ցաւերի մէջ, միսիթարում և իրախոսում էր դժուար հսնողամններում: Այսպէս Զ...Պ...ի սմանկանոցում ապրում էին ոչ թէ ուրիշների հաշով, այլ սեպհական աշխատանքով: Նա, որ մտնում էր այնտեղ, սովորում էր մի որ և է օգտաւէտ աշխատանք կամ արհեստ և գուրս էր գոլիս այնտեղից միայն այն ժամանակ, երբ ընտելանում էր սեպհական աշ-

իսատանկով հաց ճարմել իրան համար և խնայել աշ-
խասանքից սասացած գրամմերը:

Բայց բոլոր մնանկները չը կարողացան այդպէս
բազմաւորութել նրանք, որ սասատիկ ընտելացին էին
անդորրաւոթեան և անտառակութեան, դատարկաշըր-
ջութիւնն աւելի նախապատիւ էին համարում. նոքա
հեռացան Զ...Պ...ից և էլ ոչ մի ժամանակ չը վե-
րաբարձան այնուեղ:

Տնանկանցում բնակուողներն ապաս ժամերում
կապարում էին և ուրիշ շատ աշխատութիւններ—
սարայատակամ էին փողոցները, ուղղում էին ճանա-
պարհները, անտառը կարգի էին բերում: Այդ բո-
լորի համար համարակութիւնն այժմ աւելի քիչ ծախ-
սեր էր անամու քան թէ առաջ, որովհետեւ գործը
այժմ ապնաւոթեաբը էր ընթանում: Մնանկանցի
քոլոր ծախսը համարեա խնամուողների աշխատան-
քովն և կամաւոր նու էրագրամներովն էր ստացւում:
Զ...Պ...ում գործ զբած այդ օրինակն աղջեց շատ
ուրիշ շրջակայ գիւղերի վերայ էլ և նրանք էլ ի-
րանց մէջ հիմնեցին նոյնանման անանկանցներ:

ԴԱՐՁԵԱԼ ՆՈՐՈՒԹԻՒՆ.

— Գանիիէլ դարձեալ նոր բան է մտածում: —
խօսում էին գիւղացները:

Ամեն իրեկոյ ուսուցչի և աշակերաների հետնա
դաշտերն էր գնում մանգալու: Նոքա իրանց հետ
վերցնում էին իրկայն շղթաներ, խփում էին գետնին

երկայն ցցեր և Գանիիէլն երկայն ստների վերայ գըր-
ուած ինչ որ մի սեղանի վերայից նայում էր այդ
ցցերին: Այս շարունակութեց մի ամբողջ տարի և նոր
իմացան գիւղացները, որ Գանիիէլը չափում էր հո-
ղը: Նա նշանակեց բոլոր դաշտերի, ճանապարհների,
հրապարակ տեղերի յատակագծերը: Յատակագծի վե-
րայ պարզ երեւում էր իւրաքանչիւրի հողը, ճանա-
պարհները, խրճիթներն... Այն (յատակագիթը)
կախեցին գիւղական կառավարութեան շինութեան
մէջ: Զ...Պ...ում, ինչպէս և գիւղմնական միւս գիւ-
ղերում, հասարակական շատ քիչ հողեր կային: մէջ
մասամբ հողն առանձին-առանձին ընտանիքների էր
պատկանում, որ հօրից ժամանդութիւն էր մնացած
որդուն: Այժմ ամեն մարդ պարզ տեսնում էր իւր
գաշտի և մարգագետնի մեծութիւնը, և ուշողրու-
թեամբ նշանակում էր իրան համար, որովհետեւ հող
գնելիս կամ վաճառելիս շատ կը հարկաւորուէր այն:

Տանուտէր Գանիիէլն ասում էր,

— Ես գրանից առաւել օդատակար միջոց գիտեմ:
Երբ գիւղացները ինդքիցին տակ այն, նա պա-
տասխանեց:

— Իմացէք ինքներդ, իսկ եթէ մինչև «Աստուա-
ծածնի պաշտպանութեան» տակը չէք իմանալ, այն
ժամանակ ես կ'ասեմ:

Տօնը արդէն անցել էր, բայց նրանք դեռ չէին
իմացել: Այն ժամանակ Գանիիէլն առաջ մնցաւ ժոռ,
զովում և ասեց:

Դուք ամենքդ էլ տեսաք մեր հողի յատակագիթ

ՃՐ: Զեղանից իւրաքանչիւրը նայելով նրա վերայ՝ մտածում է իւր հողերի համար, իսկ երբ ևս նայում էի գաշտերին, որ մենք մշակում ենք մեր երեսի քրտինքով և Աստծու օրհնութեամբ, շատ անգամ տիրում էի, որ այսպիսի չարչարմնքով աշխատելով չեն մշակում այնպէս, ինչպէս որ հարկաւոր է և այդ պատճառով չեն բերում այն եկամուար, որ պէտք է ստացուէր: Այժմ ինձ պարզուեց, թէ ինչն է զրա պատճառը. այդ՝ ժամանակի անտեղի կորչելն է: Զեղանից իւրաքանչիւրն ունի հող, բայց այդ հողը մէկ տեղ չէ գտնուում, այլ ցրուած է զանազան տեղերում՝ հողի մէկ կողորը սարի վերայ է, միւսն անտառի յետեւում, երրորդը կամրջի մօտ և այլն: Մէկ կոտրից միւսը հասնելու համար երկար ժամանակ է կորչում, իսկ եթէ ամեն-մէկի գաշտերը մէկ տեղը մի սահմանի մէջ լինէին, այն ժամանակ նա իրան մշակներով կարող էր նոյն ժամանակում մեծ գաշտեր կառավարել և ՚ի հարկէ շատ եկամուար էլ ստանալ:

—Այդ բոլորն այդպէս է, —պատասխանեցին գիւղացիները, բայց ուրիշ կերպ չէ կարելի. —չենք կարող դաշտերն ուսների վերայ առնել որ մէկ տեղ բերենք:

Գանիէլը պատասխանեց.

—Կարելի է, եթէ միայն դուք ինքներդ այդ ցանկանաք: Դուք ունէք ամբողջ հողի յատակադիմքը և իւրաքանչիւրդ գիտէ, ինչքան մեծութիւն ունի իւր բաժին հողը: Բայց գործը, ՚ի հարկէ, ու-

նի իւր դժուարութիւնը: Դուք պէտք է մէկդ միւսի հետ փոխարինէք ձեր ցրուած հողերի կոորներն այն պէս՝ որ իւրաքանչիւրի բոլոր հողերը մէկ տեղ լինեն: Թող գրացիները պայմանաւորուեն իրար հետ, որ գրամմերով վարձապատճիւն ստանայ այն մարդը, որին քիչ կամ վաստ հող կ'ընկնի. և եթէ այդպիսով պատահէի, որ մէկը փոխարինութեամբ կողցնի ինչ որ մի կտոր հողը այնուամենայնիւ նա երկու անդամ աւելի օգուտ կ'ունենայ, որովհետեւ նրա բոլոր հողերը մէկ տեղ կը լինեն: Միայն մի՛ վախեցէք ոչ մի դժուարութիւնից և չ'ասէք, որ մենք արգէն բնակւոցել ենք մեր նախնիքների օրինակներին:

Երբ Գանիէլը խօսել ը վերջացրեց, գիւղացիները գլուխները շարժելով սկսեցին ցրուել: Նոքա տառւմ էին.

Այդ լու միաք է, բայց նրա կատարելը գըժուար է:

Մինչ այս մինչ այն՝ գործերից աղատ ժամանակում մի քանիսներն մատծում էին, թէ ինչպէս պէտք է փոխարինութիւն անեն: Կարճ միջոցում պայմանները սկսեցին գործադրուիլ և մի քանիսն յաջողուեց մի սահմանագծի մէջ դնել իւր բոլոր հողերը, իսկ մի քանիսները թէկ չ'են կարողանում համաձայնուիլ իրար հետ, սակայն գործը քիչ-քիչ առաջ էր գնում: Առաջին կէս աալում հինգ հողու յաջողուեց իրանց բոլոր հողերը մէկ տեղ հաւաքել.

Զեն օրինակելի էր: Միւսներն էլ նկատեցին ու հասկացան զրա օգուտը և իրանք էլ սկսեցին նոյնն

անել: Տարեց տարի կալուածները մէկ տեղ էին հաւաքւում, որից ստացած օգուտն ակներեւ էր:

Ի՞նչ ԴԱՐՁԱԿ Զ...Պ...ԳԻՒՂԸ.

Զ...Պ... զիւղը գործնականապէս վայլըւմ էր իր բարեկարգութիւններով: Պազառու այդիների միջում, շրջապատուած լինելով և՝ մարդագետիններով ու ոսկեդրյն գաշտերով, թւում էր, որպէս թէ երկրաւոր դրախտն լինէր նա: Փողցների երկու կողմերն արնկուած էին խնձորենիններով:

Դիւղը մոնելին՝ մարդու աշքի նշանաւոր դիւղապաքը էր երեւումնա, բոլոր տները, մինչև անդամ ցածրայարկանինները, գեղեցիկ էին և մաքուր, պատուհանները լուսաւոր, տանիքները, համարեա բոլորը, ծածկուած էին կղմինտրով: Կառավարութիւնը հրդէցի երկիւղեց արգելել էր եղեգով ծածկել տանիքները: Նատ տանիքների վերայ շանթարգելներ էին շինուած: բոլոր տների տուած փոքրիկ պարտէղներ, նրանց մէջ ծաղկեներ, իսկ ունաց մէջ փեթակներ, կային:

Երեւում էր, որ բնակիչներն ապրում էին համերաշխութեան, բաւականութեան... մէջ. հագնեւում էին հասարակ, բայց մաքուր, գէմքները վառվուուն, առողջ և գոհ էին: Ուրիշ զիւղերի մեծանունների որդիքը մեծ մասամբ Զ...Պ...ից էին ընտրում իրանց հարժանացուները և եթէ նրանք երբեմն իրանց հետ մեծ գումար չէին բերում, բայց հմտւած և փորձուած

տանտիկիններ էին գուրս գալիս: Նոյնպէս՝ ուրիշ հարուստ ընտանիքներ թէեւ երբեմն դժուարանում էին իրանց աղջկան տալ Զ...Պ...գիւղացի փեսայացուի, բայց բոլորն էլ այն կարծիքին էին, որ աղջեկն այնտեղ բարեկարգ վիճակ կ'ունենայ:

Զ...Պ...ում այլ ևս գաւարկաշըջեկներ և աղքաններ չ'եին երեւում: Զունեւորներն էլ տնանկանոցումն էին լաւ ուտելիք և հագնելիք սահնում: Ամենից աղքատ խրձիթը մանելիս՝ երեւում էր, որպէս թէ այստեղ հարուստ մարդ է ապրում: յատակներն աւելած և լուացած, լուսամուտները մեծ-մեծ...

Ամարային ամիսներում, լաւ եղանակներին, կիւրկէ օրերը շատ ուրախալի էր Զ...Պ...ում լինել: Քաղաքից մեծ բազմութիւն էր հաւաքւում այնտեղ: Զրօնում էին այդիներում, կաթ էին խմում, խնձոր, մեղր ուտում, և նստոտում էին կանաչ մարդագետինների վերայ կամ կակզի ծառերի տակ և նայում էին փոքրիկ աղջիկներին, որոնք երգերի ձայնով պարում էին:

Արբեցութեան, աւազակութեան, վէճերի և գոցանմանցիմար սովորութիւնների մասին Զ...Պ...ի բընտկիչների մէջ ամեննելին ձայն էլ չըկար, լիութիւնից և ուսումնարանից տարածուած լաւ զասակարակութիւնից գիւղացինների մէջ ընդհանրացել էր աղնուութեան, բարեխղճութեան և սիրոյ զգացմունքները:

Ա. Մ. Փ Ո Փ Ո Ւ Մ Ն.

Ս.յդ ժամանակ Աստուած ուրախացրեց Գանիէլին, նա ունեցաւ մի արու զաւակ: Գանիէլը հրաժռանքի մէջ էր: Նա շատապից իր բարեկամ՝ մեղծանօթ 32 գիւղացիներից մէկի մօտ:

—Ի՞մ բարեկամ,—ասեց Գանիէլը նրան, —եսոչ մի ժամանակ քեզանից փոխ չ'եմ խնդրել և այս առաջին անգամն է: Խճ 250 մանէթի ոսկիներ են հարկաւոր, թէեւ միայն մի շարաթ ժամանակով: Կարող ես գու այդ շնորհումն անել ինձ:

—Ե հարկէ կարող եմ: —պատասխանեց բարեկամը, ես քեզ շտու պարտաւոր եմ: Ես քաղաքից հետոց 400 մանէթ ստացայ, բայց համարեա արծաթ են: Կթէ կամենամ ես, մերցրու ամենը, ինչքան ժամանակով էլ որ լինի:

—Խճ ոսկիներ են հարկաւոր, —ասեց Գանիէլը: Լաւ, ես կ'աշխատեմ ոսկիներ գտնել:

—Ենորհակալ եմ քեզանից, —պատասխանեց Գանիէլը, —վաղն երեկոյեան ժամի 8-ին խնդրեմ՝ բերես ինձ մօտ՝ տուն: միայն, խնդրում եմ, ոչ մէկի հետ չը խօսես այդ մտաին:

Ս.յս միեւնդյն խօսակցութիւնը նա առանձինառանձին ունեցաւ գաղանի միւս գաշնակիցների շետ ես, բոլորից էլ 250 մանէթի ոսկիներ խնդրելով և բոլորի համար երեկոյեան 8 ժամն նշանակելով՝ ոսկիները բերելու համար և խնդրելով իւրաքանչւրից լուռ թիւն պահել:

Ս.րդէն մթնել էր: Նոքա բոլորն էլ եկել էին: Գանիէլն առաջնորդեց նրանց իւր սենեակը, բայց այնտեղ մոմ չ'էր վառւում: Գիւղացիները զարմանում էին այդպէս ժառովաւելու համար: Գանիէլը գնաց Ճրագ բերելու: Նա վերադարձաւ երկու վառած մոմերով, սպայական շղլապուն նշանազգեստով, ասպետական նշանը կրծքին, երկայն սուրը կողքին, Ճիշտ այնպէս, ինչպէս նրան տեսել էին սրանից 7 տարի առաջ երբ հաւաքուել էին ոսկի շինելուց արհետը սովորելու:

—Եթէ գուք բերել էք այն, որի համար ես խնդրել էի ձեզ, ի՞մ բարեկամներ, դրեցէք այստեղ սեղանի վերայ, —ասեց Գանիէլը:

Մէկը միւսի յետեկոց գիւղացիները սկսեցին մօտենալ սեղանին, ոմանք էլ ներութիւն էին յայտնում, որ ոսկիներ չը կարողացան բերել դրամների փոխարէն:

—Քոլորը մէկ է, —պատասխանեց նա, —զրեցէք այդտեղ ինչ որ բերել էք:

Ժողովուեց մեծ քանակութեամբ ոսկի, արծաթ, արժէ թղթեր:

Ա.յն ժամանակն Գանիէլն ասեց:

—Այսօր վերջացաւ փորձառութեան համար նըշանակած ժամանակամիջոցը, անցաւ 7 տարի և 7 շարաթը, որոց մասին ես ձեզ ասել էի: Նայեցէք այստեղ զուք սեղանի վերայ այն գիշերուայ ձեր տեսածից աւելի ոսկի էք հաւաքէլ: Ա.յն ժամանակ մի սեպհական կոպէկ էլ չ'ունէիք, իսկ հիմա ամեն-մէկը

250 մանեթ էք բերել և բոլորը միասին միանդամից
8 հաղար մանեթ է հաւաքուել: Ահա այսպէս ես
սովորեցրի ձեզ ոսկի պատրաստելու արհեստը: Այժմ
հասկացէք, որ ոսկի ձեռք բերելու արհեստը իսկա-
կան ոսկուց առելի մեծ արժէք ունի և ամենուղաւ-
իմաստութիւնն է կետնքի մեջ՝ որովհետեւ մարդու-
տալիս է երջանկութիւն և բաւականութիւն: Գնո-
ցէք, սովորեցրէք այդ մասին և ձեր երեխաներին:
Կամ գուցէ գուք սպասում էք մի որ և իցէ բանի:

Ժպտացին գիւղացիները և պատախանեցին:

— Մենք արդէն վաղուց հասկացել ենք, որ գու-
ընդունակ ես խօսքով ոսկի շինել և 'ի սրտէ շնորհա-
կալ ենք քեզանից, գու մեզ բերիր զէսպի ճշմարտու-
թեան ճանապարհը: Առանց քեզ և քո օդնութեան
մենք գուցէ կորչենք:

Դանիելը զոհութիւն յայտնեց այդ խօսքերի
համար և պինդ սեղմում էր նոցա ձեռքերը: Նա դր-
բամնելն իսկոյն վերապարձրեց նրանց, որովհետեւ իր
պահանջելով ուզում էր փորձել նրանց իւրաքանչիւ-
րի գէպի մերձական ունեցած յարաբերութիւնը:

— Գործադրիր այդ, ինչպէս կամենում ես, քեզ
համար մենք պատրաստ ենք կրակի և ջրի մէջ ընկ-
նելու, պատրաստ ենք և մեռնել քեզ համար...—
պատախանում էին նրանք:

Երջապատելով նրան՝ նոքա անալում էին նրա
նշանագրեալը, կրծքի վերայի խաչը և հարցնում
էին նրան՝ թէ որտեղից են այդ բոլորը:

Նա պատախանեց.

— Իմ հօր՝ ուսումնալունի նախկին ուսուցչի շը-
նորհիւ ես շատ օգտական բաներ եմ սովորել այդ և
պաշտօնիս եռանդով կատարելը մեծացրին ինձ և ես
հասայ սպայտկան տատիճանի: Մէկ անգամ պատե-
րավի ժամանակ ես փրկեցի արքայորդուն մահից:
Ահա թէ որտեղից է այս վերքի նշանը Ճակատիս և
ասպետական նշանը կրծքին վերայ, իսկ պաշտօնիցս
հրաժեշտ տալու ժամանակ թոշակ նշանակեցին ինձ
ամբողջ կեանքիս ժամանակ. Թագաժառանդը չ'էր
մոռացել—և այցելեց ինձ, ինչպէս կը մտարեկ ք
այդ: Երբ որ ես եկայ այստեղ Զ...Պ..., ինձ ապշեց-
րեց զիւղացիների աղքատութիւնը և նրանց չա-
րաչար տանջուելը, ես չ'էր ցանկանալ մնալ այստեղ
և կը հեռանայի, եթէ չը տեսնէի ջրաղացքանի
աղջկան: Նա, իմ Տարիամը, պահեց ինձ...Այս ժա-
մանակ ես վճռեցի մնալ այստեղ և ինձ աղքատնե-
րին հաւանար ցոյց տուի, որ յարգանք զրաւեմ գէպ
ինձ. միայն Տարիամի ծնողներին բացայացտեցի բո-
լոր իսկութիւնը, եթէ ոչ նոքա չ'էին համաձայնիւ
նրան ինձ տալու...

Գիւղացիները, լելով Դանիելի պատմութիւնը,
զարդարում և ուրախանում էին նրա երջանկու-
թեամբ:

Դանիելը զրկում էր նրանց, իսկ սրանք շնոր-
հակալ էին լինում նրանից, որ պատճառ գարձաւ ի-
րանց երկրային ու յաւիտենական բաղդաւորութեան
և «Հայր» էին կոչում նրան: Նրանք իմսպեցին Դա-
նիելին, որ նորամանկան միլտութեան հանդիսին ի-

լոսնք էլ մասնակցեն և ուրախանան նրա շետ մի-
տափեն:

Հասաւ միբութեան օրը, որ կիւրակի էր:
Վաղ առաւօտուանից ամբողջ գիւղն ոտքի վերայ էր:
Եկեղեցու զանգակը խփեց, նորամննկանը եկեղեցի
տարան. մանկան յետելից գնում էր ջրաղացրանը
իւր կնոջ հետ և մանկան հայրը:

Քողոք ժողովուրդը կանգնած եկեղեցու դաւ-
թում՝ ճանապարհ բաց անելով նայում էր զնացքին:

Նոքտ խոնարհում էին Գանիելին՝ ասելով.
— Բարեկ', մե՛ր Հայր:

Ամենքն էլ արտասում էին, որովհետեւ ոչինչ
չըկայ բարձր և սրտաշարժ, բացի զգացմունքից և
մերձականներին անձնանուիրութիւնից:

Ամբոխը խռնուել էր եկեղեցու մէջ։ Հայր Պիտ-
րոսը քարոզեց երախտագիտութեան մասին, նրա ա-
մենամի խօսքն մարդու ուղիղ սրտի մէջ էր մտնում։
Ժողովուրդը սրտաշարժուած, աշխատում էր պահել
իւր արտասուքները։ Մաղթանքի ժամանակ, երբ
Հայր Պետրոսը գողգոջուն ձայնով շնորհակալ էր լի-
նում Աստծուց Զ...Պ...գիւղին բարի կառավարիչներ
շնորհելու համար, բոլորն էլ Դանիէլի մասին էին մը-
տածում։ Կեքն հայր Պետրոսն էլ չը կարողացաւ
զսպել իրան և արտասուքների միջից «Դանիէլ» ա-
նունն արտասանեց, առենքն էլ հեկեկում էին եկե-
ղեցում... և մտածում էին այն մասին, թէ ի՞նչ է
արել Դանիէլը իրանց գիւղի համար։ Ընդհատուեց
քարոզը։ Քահանան օրհնեց սրտաշարժուած ժողո-


վեղին: Ոչ մի ժամանեակ այնպէս հրձուանքով չելն
երգել «Քեզ Աստուած, փառ արանում ենք» գեղեցիկ
մազթանքը:

Գանիէլը սրտաշարժուած և մտայոյլ երբ եկեց զեցոց զու ըս եկաւ, չէր համարձակուոմ աչքերը միլ բարձացնել գլուխը ցած զցած՝ անցաւ ուրախ ամրութիւնի միջով։ Նա չէր կարողանուոմ խօսել:

Այդ օլուանից Պանիկը զիւղի հայր էն կուչում:

Ճշմարիտ է՝ որ պետական քիզ ընթացքում ինչ բարիք ցանես, մեծ արդիւնքով կը հնձես այն, որով հետեւ բարեկառութեան, համեստութեան և սիրոյ փարձադրող Աստուած կայ:





1298

2013

